



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հարկային վարչարարության ախտորոշիչ
գնահատման գործիք

Կատարողականի գնահատման հաշվետվություն

2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍ

Կազմել են՝

Մայքլ Հարդի, Պատրիկ Բերգլունդ, Ֆիլիպ Ռուսեթ, Թելիտա Սնայքերս և Գրեհեմ Ուայթ

Լիազորող վարչություն


Հարկաբյուջետային հարցերի վարչություն

Սույն զեկույցի բովանդակությունը համարվում է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) աշխատակազմի կողմից Հայաստանի Հանրապետության իշխանություններին (ՏՀ ստացող) տրամադրված տեխնիկական խորհրդատվություն՝ ի պատասխան տեխնիկական աջակցություն ստանալու իրենց խնդրանքի:

Սույն զեկույցը (ամբողջությամբ կամ մասամբ) կամ դրա ամփոփ նկարագրերը կարող են ԱՄՀ-ի կողմից բացահայտվել ԱՄՀ գործադիր տնօրեններին և նրանց աշխատակազմի անդամներին, ինչպես նաև ՏՀ ստացողի այլ գերատեսչություններին կամ հաստատություններին և Համաշխարհային բանկի անձնակազմին ու օրինական շահ հետապնդող այլ տեխնիկական աջակցություն տրամադրողներին և դոնորներին՝ նրանց պահանջով, եթե ՏՀ ստացողն այդ բացահայտմանը հատուկ առարկություն չի ներկայացնում (տե՛ս [Տեխնիկական աջակցության վերաբերյալ տեղեկությունների տարածման անձնակազմի գործառնական ուղեցույցը](#)): Սույն զեկույցը (ամբողջությամբ կամ մասամբ) կամ դրա ամփոփ նկարագրերն ԱՄՀ անդամ չհանդիսացող կողմերին, բացառությամբ ՏՀ ստացողի գերատեսչություններին կամ հաստատություններին, Համաշխարհային բանկի անձնակազմին, օրինական շահ հետապնդող այլ տեխնիկական աջակցություն տրամադրողներին և դոնորներին, բացահայտելու համար պահանջվում է ՏՀ ստացողի և ԱՄՀ Հարկաբյուջետային հարցերի վարչության հստակ համաձայնությունը:

Սույն հրապարակման մեջ ներկայացված վերլուծությունը և քաղաքականության վերաբերյալ նկատառումներն ԱՄՀ Հարկաբյուջետային հարցերի վարչության վերլուծությունը և քաղաքականության վերաբերյալ նկատառումներն են:

Արժույթի միջազգային հիմնադրամ, ԱՄՀ հրապարակումներ
Փոստային բաժանորդային արկղ 92780, Վաշինգտոն, ԿՇ 20090, ԱՄՆ
Հեռ.՝ +(1) 202.623.7430 • Ֆաքս՝ +(1) 202.623.7201
publications@IMF.org
IMF.org/pubs



TAX ADMINISTRATION DIAGNOSTIC
ASSESSMENT TOOL

Performance Assessment Report

Հայաստան

Մայքլ Հարդի, Պատրիկ Բերգլունդ,
Ֆիլիպ Ռուսերթ, Թելիտա Սնայքերս
և Գրեհեմ Ուայթ

2025 թվականի հունիս

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ԿՐՃԱՏ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ	4
ՆԱԽԱԲԱՆ.....	6
ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ	8
I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	18
II. ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	21
Ա. Երկրի նկարագիրը.....	21
Բ. Տվյալների աղյուսակներ.....	21
Գ. Տնտեսական վիճակը	21
Դ. Հիմնական հարկերը.....	22
Ե. Ինստիտուցիոնալ շրջանակը.....	22
Զ. Հարկային վարչարարության բարեփոխումների ներկա վիճակը	23
Է. Տեղեկությունների միջազգային փոխանակումը.....	24
III. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ..	26
Ա. ԿԱՌ 1. Գրանցված հարկ վճարողների բազայի ամբողջականությունը	26
Բ. ԿԱՌ 2. Ռիսկերի արդյունավետ կառավարում.....	29
Գ. ԿԱՌ 3. Աջակցություն պահանջների կամավոր կատարմանը.....	35
Դ. ԿԱՌ 4. Հարկային հայտարարագրերի ժամանակին ներկայացում.....	41
Ե. ԿԱՌ 5. Հարկերի ժամանակին վճարում.....	45
Զ. ԿԱՌ 6. Հայտարարագրերում ճշգրիտ հաշվետվությունների ներկայացում	49
Է. ԿԱՌ 7. Հարկային վեճերի արդյունավետ լուծում.....	55
Ը. ԿԱՌ 8. Եկամուտների արդյունավետ կառավարում.....	59
Թ. ԿԱՌ 9. Հաշվետվողականություն և թափանցիկություն	62

ԱՐՅՈՒՍԱԿՆԵՐ

1. Հայաստան. ՀՎԱԳԳ-ի կատարողականի գնահատման ամփոփ նկարագիր.....	10
2. P1-1 գնահատում.....	26
3. P1-2 գնահատում.....	28
4. P2-3 գնահատում.....	30
5. P2-4 գնահատում.....	32
6. P2-5 գնահատում.....	33
7. P2-6 գնահատում.....	33

8. P2-7 գնահատում.....	35
9. P3-8 գնահատում.....	37
10. P3-9 գնահատում.....	39
11. P3-10 գնահատում.....	39
12. P3-11 գնահատում.....	40
13. P4-12 գնահատում.....	43
14. P4-13 գնահատում.....	44
15. P4-14 գնահատում.....	45
16. P5-15 գնահատում.....	46
17. P5-16 գնահատում.....	46
18. P5-17 գնահատում.....	47
19. P5-18 գնահատում.....	48
20. P6-19 գնահատում.....	51
21. P6-20 գնահատում.....	52
22. P6-21 գնահատում.....	53
23. P6-22 գնահատում.....	54
24. P7-23 գնահատում.....	56
25. P7-24 գնահատում.....	57
26. P7-25 գնահատում.....	58
27. P8-26 գնահատում.....	60
28. P8-27 գնահատում.....	61
29. P8-28 գնահատում.....	61
30. P9-29 գնահատում.....	63
31. P9-30 գնահատում.....	64
32. P9-31 գնահատում.....	65
33. P9-32 գնահատում.....	66

ԳՃԱՊԱՏԿԵՐՆԵՐ

1. Հայաստան. Կատարողականի գնահատականների բաշխում	17
--	----

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

I. ՀՎԱԳԳ շրջանակը	68
II. Հայաստան. Երկրի պատկերը	71
III. Տվյալների աղյուսակներ.....	73
IV. Կազմակերպական սխեմա	95
V. Փաստաթղթերի աղբյուրներ.....	96

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ԿՐՃԱՏ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ

ԱԲ	Արհեստական բանականություն
ՀՀ դրամ	Հայկական դրամ
ՀԱՀ	Հայաստանի ամերիկյան համալսարան
ԿԲ	Կենտրոնական բանկ
ՀԲՊ	Համապատասխանության բարելավման պլան
ԿԵՀ	Կորպորատիվ եկամտային հարկ
ԿՀՀ	Կրկնակի հարկման մասին համաձայնագիր
ՏՓ	Տեղեկությունների փոխանակում
ՀՀՎ	Հարկաբյուջետային հարցերի վարչություն (Արժույթի միջազգային հիմնադրամի)
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՄՌ	Մարդկային ռեսուրսներ
ՆԱ	Ներքին աուդիտ
ՏՀՏ	Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ
ՆՔ	Նույնականացման քարտ
ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիա
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ՖՆ	Ֆինանսների նախարարություն
ՔՏՍՏԻԲ	Քաղաքական, տնտեսական, սոցիալական, տեխնոլոգիական, իրավական, բնապահպանական (վերլուծություն)
ՀՎԱ	Հարկերի վճարում աշխատավարձից
ԱԵՀ	Անձնական եկամտային հարկ
ԿԱՌ	Կատարողականի արդյունքների ոլորտ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՊՌԳ	Պետական ռեգիստրի գործակալություն
ՊԵԿ	Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե
ՍԱՀ	Սոցիալական ապահովության համար
ՌԻԹՀՎ	Ուժեղ կողմեր, թույլ կողմեր, հնարավորություններ, վտանգներ (վերլուծություն)

ՀՎԱԳԳ	Հարկային վարչարարության ախտորոշիչ գնահատման գործիք
ՀՏՓՀ	Հարկային տեղեկությունների փոխանակման մասին համաձայնագիր
ՀՎՀՀ	Հարկ վճարողի հաշվառման համար
ԵՀՀ	Եկամուտների համընդհանուր հայտարարագիր
ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ՀԲ	Համաշխարհային բանկ

ՆԱԽԱԲԱՆ

2025 թվականի մայիսի 12-ից մինչև 2025 թվականի մայիսի 27-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել է Հայաստանի Հանրապետության հարկային վարչարարության համակարգի գնահատում՝ օգտագործելով Հարկային վարչարարության ախտորոշիչ գնահատման գործիքը (ՀՎԱԳԳ): ՀՎԱԳԳ-ը տրամադրում է հարկային վարչարարության կատարողականի գնահատման հիմքը, որը կարող է օգտագործվել բարեփոխումների առաջնահերթությունները որոշելու եւ հետագա կրկնվող գնահատականներով ընդգծելու բարեփոխումների ձեռքբերումները:

Գնահատման թիմը բաղկացած էր հետևյալ անձանցից՝ պարոն Մայքլ Հարդի (ԱՄՆ հարկաբյուջետային հարցերի վարչություն եւ առաքելության ղեկավար), տիկին Թելիտա Սնայքերս եւ պարոն Գրեհեմ Ուայթ (ՀՀՎ-ի արտաքին փորձագետներ), պարոն Պատրիկ Բերգլունդ (Skatteverket – Շվեդիայի հարկային գործակալություն) եւ պարոն Ֆիլիպ Ռուսեթ (Ֆրանսիայի հանրային ֆինանսների գլխավոր տնօրինություն):

Գնահատման ընթացքում թիմը հանդիպումներ ունեցավ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) նախագահ պրն Էդուարդ Հակոբյանի, նախագահի առաջին տեղակալ պրն Վրեժ Մխիթարյանի, նախագահի տեղակալ պրն Համլետ Սահակյանի եւ ՊԵԿ բազմաթիվ բարձրաստիճան ղեկավարների եւ այլ աշխատակիցների հետ: Մասնավորապես, Չարգացման եւ կառավարման ռազմավարության ծրագրերի վարչության պետ Արսեն Սարիկյանը մասնակցել է գնահատման թիմի եւ ՊԵԿ ներկայացուցիչների միջեւ եղած բոլոր հանդիպումներին, համակարգել է ՊԵԿ-ի ջանքերը, այդ թվում՝ հանդիպումները հարկ վճարողների սպասարկման, համալիր աուդիտի եւ հարկային հսկողության գործունեության համար պատասխանատու դաշտային գրասենյակի աշխատակիցների հետ: Պարոն Սարիկյանը նաեւ կազմակերպել է ֆինանսների նախարարության (ՖՆ) պաշտոնյաների մասնակցությունը մի քանի հանդիպումների, որտեղ ՖՆ-ը համապատասխան դերակատարություն է ունեցել Հայաստանի հարկային վարչարարության համակարգում: Հայաստանում հարկային վարչարարության վերաբերյալ առավել լայն ընկալում ստանալու համար գնահատման թիմը հանդիպել է նաև գործարար միավորումների ներկայացուցիչների և հարկային և աուդիտի ոլորտի մասնագետների հետ:

Թիմը շնորհակալություն է հայտնում ՊԵԿ-ի նախագահ պրն Հակոբյանին՝ գնահատման ընթացքում իր ամբողջ անձնակազմին հասանելի դարձնելու եւ գնահատման թիմին բաց ու դրական ներգրավվածության համար: Թիմը հատկապես ցանկանում է շնորհակալություն հայտնել պրն Սարիկյանին եւ տկն Մայրանուշ Մանվելյանին՝ թիմին ցուցաբերած մշտական աջակցության եւ օժանդակության համար, եւ պրն Գեուրգ Գեուրգյանին եւ տկն Թամարա Քալանթարյանին՝

թարգմանչական անգնահատելի աջակցության համար: Գնահատող թիմը շնորհակալություն է հայտնում նաև ԱՄՀ Կովկասի, Կենտրոնական Ասիայի եւ Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոնին (CCAMTAC)՝ գնահատումը նախաձեռնելու նպատակով լրացուցիչ ֆինանսական օժանդակության համար:

Պետական եկամուտների կոմիտեին երկրի գնահատման ավարտին ներկայացվել է կատարողականի գնահատման հաշվետվության նախագիծը: Հաշվետվության նախագծի վերաբերյալ Պետական եկամուտների կոմիտեից դրանից հետո ստացված գրավոր մեկնաբանությունները դիտարկվել են գնահատման թիմի կողմից եւ ըստ անհրաժեշտության արտացոլվել են հաշվետվության այս վերջնական տարբերակում: ԿԳՀ-ն ուսումնասիրվել և հաստատվել է ՀՎԱԳԳ-ի քարտուղարության կողմից:

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Հայաստանի ՀԱԱԳԳ գնահատման արդյունքները ներկայացված են հաջորդիվ, այդ թվում՝ հիմնական ուժեղ կողմերի և թույլ կողմերի վերհանումը:

Ուժեղ կողմեր

- Էլեկտրոնային գրանցման, փաստաթղթերի ներկայացման եւ վճարման ուժեղ հնարավորություններ:
- Սոցիալական մեդիայի լավ օգտագործում՝ հարկատուներին տեղեկացնելու եւ կրթելու համար:
- Համապատասխանության բարելավման լավ մշակված պլանների ստեղծում:
- SS եւ տվյալների ռիսկերի լավ կառավարում՝ ISO 27001 հավաստագրման միջոցով:
- Վեճերի շատ ժամանակին լուծում:
- Լավ թափանցիկություն՝ ծրագրերի հրապարակման միջոցով:

Թույլ կողմեր

- Աուդիտը եւ ճիշտ հաշվետվություն ապահովելու այլ մեթոդները զարգացման կարիք ունեն:
- Ժամանակին վճարման եւ պարտքերի կառավարման գործընթացները զարգացման կարիք ունեն:
- Բանկերից ստացված տեղեկություններին սահմանափակ հասանելիությունը խոչընդոտ է:
- Վերլուծության եւ տվյալների համապատասխանեցման հնարավորությունները պետք է զարգանան:
- Մարդկային կապիտալի ռիսկերը պաշտոնապես կառավարելու ունակություն:

ՊԵԿ-ը շատ արդյունավետորեն է օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաները (SS)՝ պահանջներին կամավոր համապատասխանությանն աջակցելու եւ հարկ վճարողների արդյունավետ գրանցումը, փաստաթղթերի Էլեկտրոնային ներկայացումը եւ Էլեկտրոնային վճարումը դյուրացնելու համար: ՊԵԿ-ը կարող է նաեւ ցույց տալ պահանջներին հարկադիր համապատասխանության արդյունավետ մոտեցման շատ բաղադրիչներ՝ համապատասխանության ռիսկերի կառավարման (ՀՌԿ) գործընթացների լավ ընկալման եւ լավ մշակված համապատասխանության բարելավման պլաններով (ՀԲՊ-ներ): Այնուամենայնիվ, համապատասխանությունը հարկադրելու կամ դյուրացնելու ուղղված գործողություններ իրականացնելու ունակությունը՝ աուդիտներ, վճիռներ եւ պարտքերի հավաքագրում, հատկապես՝ խոշոր հարկատուների համար, գիջում է միջազգային լավ գործելակերպին: Դեռեւս չկան շարունակական զարգացման մշակույթի հիմնավոր ապացույցներ, որտեղ կառավարման եւ մոնիթորինգի գործընթացներն օգտագործվում են ապագա բարելավումները բացահայտելու համար, այլ ոչ թե պարզապես անցյալի կատարողականը ստուգելու համար:

Աղյուսակ 1-ը ներկայացնում է կատարողականի գնահատականների ամփոփումը, իսկ Գծապատկեր 1-ը՝ գնահատականների բաշխման գրաֆիկական պատկերը: Գնահատումը կառուցված է ՀՎԱԳԳ-ի շրջանակի կատարողականի ինը արդյունքների ոլորտների (ԿԱՌ-ներ) եւ 32 բարձր մակարդակի ցուցանիշների շուրջ, որոնք խիստ կարեւոր են հարկային վարչարարության կատարման համար: Յուրաքանչյուր ցուցանիշ գնահատելու համար օգտագործվում է «ABCD» սանդղակ, որտեղ «A»-ն ներկայացնում է կատարողականի ամենաբարձր մակարդակը, իսկ «D»-ն՝ ամենացածրը:

**Աղյուսակ 1. Հայաստան. ՀՎԱԳԳ-ի կատարողականի գնահատման ամփոփ
նկարագիր**

Ցուցիչ	Գնահատական 2016թ	Գնահատական 2025թ	Գնահատման ամփոփ բացատրություն
ԿԱՌ 1. Գրանցված հարկ վճարողների բազայի ամբողջականությունը			
P1-1. Հարկ վճարողների վերաբերյալ ճշգրիտ եւ հավաստի տեղեկություններ:	D	B	ՊԵԿ-ը գործում է հարկ վճարողների գրանցման ազգային համակարգչային տվյալների բազա՝ գրանցման բոլոր ակնկալվող տվյալներով: ՊԵԿ-ի ներսում գրանցման համակարգը փոխկապակցված է այլ համակարգերի հետ, այնպես որ՝ ՊԵԿ-ի աշխատակիցները հարկ վճարողների տվյալների ամբողջական պատկերացումն ունեն: Այլ գործակալությունների տվյալների խաչաձեւ ստուգման որոշակի աշխատանքներ կան, սակայն դրանք սահմանափակ են:
P1-2. Պոտենցիալ հարկ վճարողների բազայի իմացություն:	B	C	Զգրանցված հարկ վճարողների հայտնաբերման ուղղված նախաձեռնությունները ad hoc են: Զգրանցված հարկ վճարողներին հայտնաբերելու համար երրորդ կողմի տվյալների ավելի մեծ համակարգային օգտագործման վերաբերյալ ապացույցներ առկա չեն:
ԿԱՌ 2. Ռիսկերի արդյունավետ կառավարում			
P2-3. Համապատասխանության ռիսկերի բացահայտում, գնահատում, դասակարգում եւ քանակականացում:	C	C	ՊԵԿ-ը համապատասխանության ռիսկերը դիտարկելիս հիմնականում օգտագործում է ներքին կամ օպերատիվ տվյալների աղբյուրները եւ չի օգտագործում շրջակա միջավայրի սկանավորումը որպես համապատասխանության բազմամյա ռազմավարական պլանավորման մաս:

Ցուցիչ	Գնահատական 2016թ.	Գնահատական 2025թ.	Գնահատման ամփոփ բացատրություն
P2-4. Ռիսկերի մեղմացում համապատասխանության բարելավման պլանի միջոցով:	D	A	ՊԵԿ-ը մշակել է համապատասխանության բարելավման պլաններ, որոնք ընդգրկում են այն ոլորտները, որոնք ամենամեծ ռիսկերն են ներկայացնում:
P2-5. Համապատասխանության ռիսկերի մեղմացման միջոցառումների մոնիթորինգ եւ գնահատում:	D	C	Համապատասխանության ռիսկերի մեղմացման ուղղված գործողությունների ազդեցության մոնիթորինգի եւ գնահատման համար օգտագործվող գործընթացը թույլ զարգացած է :
P2-6. Գործառնական ռիսկերի կառավարում:	C	C	ՊԵԿ-ն ունի SS եւ տվյալների ռիսկերի լավ կառավարում ISO 27001 սերտիֆիկացման միջոցով, սակայն չունի գործող հուսալի գործընթացներ՝ այլ գործառնական ռիսկերը գնահատելու, կառավարելու կամ մեղմացնելու համար:
P2-7. Մարդկային կապիտալի ռիսկերի կառավարում:	-	D	ՊԵԿ-ը չունի մարդկային կապիտալի ռիսկերը գնահատելու, առաջնայնացնելու և մեղմացնելու պաշտոնական գործընթացներ :
ԿԱՌ 3. Աջակցություն պահանջների կամավոր կատարմանը			
P3-8. Տեղեկությունների ծավալը, արժույթը եւ մատչելիությունը:	A	B	ՊԵԿ-ը հարկատուներին հասանելի է դարձնում կրթական եւ աջակցող տեղեկությունների լայն շարք՝ տարբեր ուղիներով: ՊԵԿ-ը դեռևս պետք է մշակի ուժեղ գործընթացներ՝ կոնկրետ տեղեկությունները թիրախավորելու համար հարկատուների կոնկրետ խմբերին:
P3-9. Տեղեկատվության վերաբերյալ հարցումներին պատասխանելու համար պահանջվող ժամանակը:	A	A	Հանգերի կենտրոնը վեց րոպեի ընթացքում պատասխանում է հեռախոսազանգերի մոտ 81 տոկոսին:

Ցուցիչ	Գնահատական 2016թ	Գնահատական 2025թ	Գնահատման ամփոփ բացատրություն
P3-10. Հարկ վճարողների համապատասխանության ծախսերի նվազեցմանն ուղղված նախաձեռնությունների շրջանակը:	B	B	Առկա են հարկ վճարողների համապատասխանության ծախսերի նվազեցմանն ուղղված մի շարք նախաձեռնություններ: Այնուամենայնիվ, առկա չէին ապացույցներ առ այն, որ հարկային հայտարարագրերը կամ այլ ձևեր պարբերաբար ուսումնասիրվում են՝ տեղեկատվության անհարկի հարցումները նվազեցնելու համար:
P3-11. Ապրանքների եւ ծառայությունների վերաբերյալ հարկ վճարողների հետադարձ կապի ստացում:	B	B	Համաշխարհային բանկի հետ միասին իրականացվել են հարկ վճարողների ընկալման մի շարք հարցումներ: Այնուամենայնիվ, չեն տրամադրվել ապացույցներ առ այն, որ հարկ վճարողների խորհրդատվությունը տարածվել է վարչարարության նկատմամբ նոր մոտեցումների նախագծման կամ փորձարկման վրա:
ԿԱՌ 4. Հարկային հայտարարագրերի ժամանակին ներկայացում			
P4-12. Փաստաթղթերը ժամանակին ներկայացնելու ցուցանիշը:	D	B+	Ժամանակին ներկայացնելու ցուցանիշները բոլոր հիմնական հարկերի շրջանում բարձր են, սակայն խոշոր հարկ վճարողների կողմից ժամանակին ներկայացման ցուցանիշները միջազգային լավ գործելակերպից ցածր են:
P4-13. Փաստաթղթեր չներկայացնողների կառավարումը:	-	B	Գոյություն ունեն փաստաթղթերը ժամկետից ուշ ներկայացնողներին կառավարելու արդյունավետ գործընթացներ, թեեւ որոշ հիբրիդային գործընթացներ կարող են հանգեցնել նրան, որ հետագա քայլերը մեկ շաբաթից ավելի տևեն:


Ցուցիչ	Գնահատական 2016թ.	Գնահատական 2025թ.	Գնահատման ամփոփ բացատրություն
P4-14. Փաստաթղթերի էլեկտրոնային ներկայացման միջոցների կիրառումը:	A	A	Բոլոր հիմնական հարկերի համար էլեկտրոնային եղանակով ներկայացումը պարտադիր է:
ԿԱՌ 5. Հարկերի ժամանակին վճարում			
P5-15. Էլեկտրոնային վճարման միջոցների կիրառումը:	A	A	Գործում է հարկերի 100 տոկոս էլեկտրոնային վճարում:
P5-16. Գանձման արդյունավետ համակարգերի կիրառումը:	A	A	Պահումը կիրառվում է զբաղվածության, շահաբաժինների եւ տոկոսային եկամտի եւ բիզնեսի եկամտի կանխավճարների համար:
P5-17. Վճարումների ժամանակին լինելը:	D	D	Խոշոր հարկ վճարողների կողմից ժամանակին վճարվող ԱԱՀ-ի ցուցանիշը 86.6 տոկոս էր: Ժամանակին վճարվող ԱԱՀ-ի ընդհանուր ցուցանիշը 84.2 տոկոս էր: Խոշոր հարկ վճարողների և ընդհանրապես հարկ վճարողների կողմից ժամանակին կատարված ԱԱՀ վերադարձի ցուցանիշը համապատասխանաբար 92.1 և 94.8 տոկոս էր:
P5-18. Հարկային ապառքների պաշարը եւ հոսքը:	D+	B	Թեև ընթացիկ տարվա հարկային ապառքները 15 տոկոսից պակաս էին, չհավաքագրված հարկային պարտքերի մեծ մասն ավելի քան 12 ամսվա է:
ԿԱՌ 6. Հայտարարագրերում ճշգրիտ հաշվետվությունների ներկայացում			
P6-19. Ստուգման գործողությունների շրջանակը, որոնք ձեռնարկվել են ոչ ճշգրիտ հաշվետվությունները հայտնաբերելու եւ կանխելու համար:	B	D	Հարկային աուդիտի ծրագիրը բավարար չափով չի ընտրում գործերը գնահատված ռիսկերի հիման վրա: Այն համակարգված չէ միասնական գործելակերպերի շուրջ: Չկա որակի ապահովման վերանայման Էական գործընթաց և աուդիտի ծրագրի արդյունավետության գնահատում:
P6-20. Տվյալների համապատասխանեցման լայնածավալ համակարգերի	D	C	ՊԵԿ-ը չունի բավարար հասանելիություն բանկային տեղեկություններին, որպեսզի

Ցուցիչ	Գնահատական 2016թ.	Գնահատական 2025թ.	Գնահատման ամփոփ բացատրություն
օգտագործում ոչ ճշգրիտ հաշվետվությունները հայտնաբերելու համար:			հնարավոր լինի լայնածավալ ավտոմատացված խաչաձև ստուգում իրականացնել հարկային հայտարարագրերում հաղորդված տեղեկությունների հետ:
P6-21. Ճշգրիտ հաշվետվությունների խրախուսման նպատակով ձեռնարկված նախաձեռնություններ:	C	C	Հարկային օրենսգրքով ՖՆ-ին թույլատրվում է պաշտոնական պարզաբանումներ ներկայացնել (հրապարակային որոշումներ): Այնուամենայնիվ, չկան մասնավոր որոշումներ կամ համապատասխանության համագործակցային մեխանիզմներ:
P6-22. Հարկային բացի մոնիթորինգ՝ հաշվետվության մակարդակների անճշտությունը գնահատելու համար:	C	A	ՊԵԿ-ն ունի հարկային ճեղքվածքներին գնահատման արդյունքների գործող շարունակական ծրագիր, որն ակտիվորեն օգտագործվում է որպես ռիսկերի գնահատման առավել լայն գործընթացի մաս :
ԿԱՌ 7. Հարկային վեճերի արդյունավետ լուծում			
P7-23. Վեճերի լուծման անկախ, գործունե և աստիճանական գործընթացի առկայություն:	B	B+	Վեճերի լուծման գործընթացը հետևում է եռաստիճան մոտեցման: Բողոքարկման հանձնաժողովը ֆիզիկապես անկախ է աուդիտի գործընթացից, սակայն առկա են կապեր աուդիտի գործառույթի և վեճերի լուծման գործառույթի միջև:
P7-24. Վեճերը լուծելու համար պահանջվող ժամանակը:	A	A	Վեճերը ժամանակին են լուծվում, եւ վարչական վեճերի լուծման գործընթացների 95 տոկոսից ավելին 30 օրվա ընթացքում ավարտվում է:
P7-25. Վեճերի ելքերի արդյունքում կատարվող գործողության աստիճանը:	C	C	Առկա են ապացույցներ վեճերում բարձրացված հարցերի արդյունքում <i>ad hoc</i> փոփոխությունների վերաբերյալ, սակայն այդ նպատակով կանոնավոր մոնիթորինգ եւ վերլուծություն առկա

Ցուցիչ	Գնահատական 2016թ.	Գնահատական 2025թ.	Գնահատման ամփոփ բացատրություն
			չեն:
ԿԱՌ 8. Եկամուտների արդյունավետ կառավարում			
P8-26. Պետական հարկային եկամուտների կանխատեսման գործընթացում ներդրում:	C	C	ՊԵԿ-ը նպաստում է պետական եկամուտների կանխատեսմանը եւ վերահսկողություն է իրականացնում հավաքագրման մակարդակում, սակայն այն հարկային ծախսերի եւ տեղափոխված կորուստների հետագծում չի իրականացնում:
P8-27. Հարկային եկամուտների հաշվառման համակարգի պատշաճությունը:	C	B	Հարկային եկամուտների հաշվառման համակարգը եւ դրա հետ կապված գործընթացները հուսալի են, սակայն համակարգի կանոնավոր ներքին աուդիտի չի կատարվել:
P8-28. Հարկերի վերադարձի մշակման պատշաճություն:	C	A	Ռիսկերի վրա հիմնված ավտոմատացված ստուգման համակարգը հնարավորություն է տալիս ԱԱՀ վերադարձերի 98 տոկոսը մշակել 30 օրվա ընթացքում:
ԿԱՌ 9. Հաշվետվողականություն և թափանցիկություն			
P9-29. Ներքին ապահովման մեխանիզմները:	C	B	ՊԵԿ-ում առկա է անձնակազմի բարելավության ապահովման մեխանիզմներ և կազմակերպական առումով անկախ Ներքին աուդիտի (ՆԱ) ստորաբաժանում, սակայն ՆԱ բաժինն արտաքին ստուգման չի ենթարկվել:
P9-30. Հարկային վարչարարության արտաքին վերահսկողություն:	D+	C	ՊԵԿ-ի տարեկան ֆինանսական հաշվետվություններն աուդիտ են անցնում Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի կողմից ամենամյա կտրվածքով, սակայն գործառնական կատարողականի աուդիտների տարեկան ծրագիր առկա չէ: Մարդու իրավունքների պաշտպանը, որը մասամբ իրականացնում է

Ցուցիչ	Գնահատական 2016թ.	Գնահատական 2025թ.	Գնահատման ամփոփ բացատրություն
			օմբուդսմենի դերը, <i>ad hoc</i> հիմունքներով արձագանքում է հարկ վճարողներից ստացված բողոքներին:
P9-31. Բարելարքության հանրային ընկալումը:	B	B	Համաշխարհային բանկի հետ համատեղ իրականացվում են հարկ վճարողների ընկալման ամենամյա հարցումներ, եւ արդյունքները հրապարակվում են անհապաղ, սակայն արդյունքների օգտագործումը սահմանափակ է:
P9-32. Միջոցառումների, արդյունքների եւ ծրագրերի հրապարակում:	C+	B	ՊԵԿ-ն անհապաղ հրապարակում է իր տարեկան հաշվետվությունները, սակայն պակաս արդյունավետ է իր գործառնական ծրագրերն ամբողջությամբ հրապարակելու հարցում կամ մինչեւ այն ժամանակահատվածը, որին դրանք վերաբերում են:

Գծապատկեր 1. Հայաստան. Կատարողականի գնահատականների բաշխում



I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցում փաստաթղթային ձևով ներկայացված են 12/05/2025 թվականից մինչև 27/05/2025 թվականն ընկած ժամանակահատվածում Հայաստանում իրականացված ՀՎԱԳԳ-ի գնահատման արդյունքները, որոնք հետագայում վերանայվել են ՀՎԱԳԳ-ի քարտուղարության կողմից: Չեկույցը կառուցված է ՀՎԱԳԳ շրջանակի շուրջ, որը բաղկացած է ինը ԿԱՌ-ներից եւ 32 բարձր մակարդակի ցուցանիշներից, որոնք կարելու է հարկային վարչարարության կատարման համար, որոնք կապված են ԿԱՌ-ների հետ: Յուրաքանչյուր ցուցանիշի գնահատականին հասնելու համար հաշվի են առնվում չափման հիսունհինգ հարթություն: Յուրաքանչյուր հարթության եւ ցուցանիշի գնահատման համար օգտագործվում է չորս կետանոց «ABCD» սանդղակ:

- «A»-ն նշանակում է կատարողական, որը համապատասխանում կամ գերազանցում է միջազգային լավ գործելակերպը: Այս առումով ՀՎԱԳԳ-ի նպատակներով լավ գործելակերպ է համարվում փորձարկված եւ ապացուցված մոտեցում, որը կիրառվում է առաջատար հարկային մարմինների մեծամասնության կողմից: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ գործընթացը «լավ գործելակերպ» համարելու համար կարիք չկա, որ այն լինի տեխնոլոգիական եւ այլ զարգացումների առաջնագծում կամ առաջին շարքերում: Հաշվի առնելով հարկային վարչարարության դինամիկ բնույթը, կարելի է ակնկալել, որ դաշտային ուղեցույցի ընթացքում նկարագրված լավ գործելակերպերը ժամանակի ընթացքում կզարգանան տեխնոլոգիաների առաջընթացին եւ նորարարական մոտեցումների փորձարկմանը եւ լայնորեն ընդունվելուն զուգընթաց:
- «B»-ն իրենից ներկայացնում է հուսալի կատարողականը (այսինքն՝ կատարողականի առողջ մակարդակ, սակայն միջազգային լավ գործելակերպից ցածր աստիճան):
- «C» նշանակում է թույլ կատարողական՝ համեմատած միջազգային լավ գործելակերպի հետ:
- «D»-ը նշանակում է ոչ պատշաճ կատարողական եւ կիրառվում է, երբ չեն բավարարվում «C» կամ ավելի բարձր վարկանիշի պահանջները: Բացի այդ, «D» գնահատականը տրվում է որոշակի իրավիճակներում, երբ գնահատողներին հասանելի բավարար տեղեկություններ չկան՝ կատարողականի մակարդակը որոշելու եւ գնահատելու համար: Օրինակ, երբ հարկային մարմինը չի կարողանում հիմնական թվային տվյալներ տրամադրել գործառնական կատարողականը գնահատելու նպատակով (օրինակ՝ փաստաթղթերի ներկայացման, վճարման եւ վերադարձի մշակման ոլորտներում), տրվում է «D» գնահատականը: Հիմքում ընկած պատճառն այն է, որ հարկային մարմնի՝ պահանջվող տվյալները տրամադրել չկարողանալը վկայում է կառավարման տեղեկատվական համակարգերի եւ կատարողականի մոնիթորինգի գործելակերպերի թերությունների մասին:

ՀՎԱԳԳ-ի շրջանակի վերաբերյալ լրացուցիչ մանրամասների համար տե՛ս I հավելվածը:

1. ՀՎԱԳԳ-ի ախտորոշիչ մոտեցման վերաբերյալ նշվող որոշ կետեր են՝

- ՀՎԱԳԳ-ով գնահատվում են կենտրոնական կառավարության եկամուտների համար կարելիք ուղղակի եւ անուղղակի ամենահիմնական հարկերի կառավարման ընթացքում ձեռք բերված կատարողականի արդյունքները, մասնավորապես՝ կորպորատիվ եկամտային հարկը (ԿԵՀ), անձնական եկամտային հարկը (ԱԵՀ), ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ), ներքին ակցիզային հարկը (ուշադրությունը կենտրոնացնելով այն գրանցված ներքին ակցիզային հարկ վճարողների վրա, որոնք առեւտուր են անում այն ապրանքների/ծառայությունների կատեգորիայում, որոնք տալիս են ըստ արժեքի ընդհանուր ներքին ակցիզային հարկի 70 տոկոսը), եւ հարկերի վճարումն աշխատավարձից (ՀՎԱ) հարկատեսակի գումարները, որոնք պահվում են գործատուների կողմից (որոնք, խստորեն ասած, ԿԵՀ-ի դրամական փոխանցումներ են): Արդյունքները գնահատելով այս առանցքային հարկերի կառավարման մասով՝ կարելի է ստանալ երկրի հարկային վարչարարության հարաբերական ուժեղ կողմերի և թույլ կողմերի պատկերը:
- ՀՎԱԳԳ-ի գնահատականներն ապացուցահեն են (Հայաստանի գնահատման նկատմամբ կիրառելի ապացույցների աղբյուրների համար տե՛ս V հավելվածը):
- ՀՎԱԳԳ-ը նախատեսված չէ հատուկ հարկային ռեժիմները գնահատելու համար, ինչպիսիք են բնական ռեսուրսների ոլորտում կիրառվող ռեժիմները: Այն նաև մատչելիություն չի ստանում մաքսային վարչարարությանը:
- ՀՎԱԳԳ-ով ներկայացվում է երկրի գոյություն ունեցող եկամուտների քաղաքականության շրջանակի գնահատում՝ կատարողականի հետ կապված այն խնդիրների գնահատականներով, որոնք լավագույնս կարող են լուծվել վարչական եւ քաղաքականության արձագանքների համակցությամբ:

2. ՀՎԱԳԳ-ի նպատակն է օբյեկտիվ գնահատում տրամադրել հարկային վարչարարության համակարգի հիմնական բաղադրիչների կենսունակության, պահանջվող բարեփոխումների ծավալների եւ ուշադրության արժանանալու հարաբերական առաջնահերթությունների վերաբերյալ: ՀՎԱԳԳ-ի գնահատականները հատկապես օգտակար են հետևյալում՝

- Հարկային վարչարարության հարաբերական ուժեղ եւ թույլ կողմերի բացահայտում:
- Բոլոր շահագրգիռ կողմերի միջեւ (երկրի իշխանություններ, միջազգային կազմակերպություններ, դոնոր երկրներ եւ տեխնիկական աջակցություն տրամադրողներ) միջեւ ընդհանուր տեսակետի ապահովում:

- Բարեփոխումների օրակարգի սահմանում (նպատակներ, առաջնահերթություններ, բարեփոխումների նախաձեռնություններ եւ իրականացման հաջորդականություն):
- Բարեփոխումների արտաքին աջակցության կառավարման եւ համակարգման ոլորացում եւ ավելի արագ եւ արդյունավետ իրականացման իրագործում:
- Բարեփոխումների առաջընթացի մոնիթորինգ եւ գնահատում՝ հետագա կրկնական գնահատումների միջոցով:

II. ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Երկրի նկարագիրը

Հայաստանի եւ այն միջավայրի վերաբերյալ ընդհանուր տեղեկությունները, որտեղ գործում է նրա հարկային համակարգը, ներկայացված են II հավելվածի երկրի պատկերում:

Բ. Տվյալների աղյուսակներ

Իշխանություններից հավաքված եւ սույն ՀՎԱԳԳ-ի կատարողականի գնահատման մեջ օգտագործված թվային տվյալները պարունակվում են III հավելվածի աղյուսակներում:

Գ. Տնտեսական վիճակը

Տնտեսությունը դանդաղում է պոտենցիալ աճից բարձր աճի երեք տարիներից հետո, որին նպաստել էին Ռուսաստանից եկող մեծ ֆինանսական ներհոսքերը, թեեւ տարածաշրջանային անվտանգության բարդ իրավիճակի հետևանքով առկա էին մարտահրավերներ:

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) տարեկան աճը 2025 թվականի ապրիլին 4.5 տոկոս է՝ 2023 թվականի 8,3 տոկոսից ցածր, որը հիմնականում պայմանավորված է Ռուսաստանից առևտրի եւ զբոսաշրջային հոսքերի մեղմացմամբ: Աճին նպաստել են ներքին մեծ սպառումը եւ մասնավոր ներդրումները, հատկապես՝ շինարարության եւ ծառայությունների ոլորտներում:¹

Տարվա գնաճը մինչեւ 2025 թվականի ապրիլը կազմել է 3,2 տոկոս²: Ընթացիկ հաշվի պակասուրդը 2024 թվականին ավելացել է մինչեւ ՀՆԱ-ի 3. 6 տոկոսը, իսկ հարկաբյուջետային պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի 3. 7 տոկոսը՝ մասամբ ԿԵՀ-ի, ԱԵՀ-ի եւ ակցիզային եկամուտների՝ ակնկալվածից ավելի ցածր ցուցանիշների պատճառով, որը որոշ չափով փոխհատուցվել է պոլնձի եւ մոլիբդենի հանքերի ավելի բարձր շահաբաժիններով: Կենտրոնական կառավարության պարտքը կազմել է ՀՆԱ-ի 48. 3 տոկոսը:

Անվանական աշխատավարձի աճը 2024 թվականի ընթացքում նվազել է և 2024 թվականի ավարտին կազմել է շուրջ 8 տոկոս՝ 2023 թվականի սկզբին մոտ 25 տոկոսի բարձր ցուցանիշից: Գործազրկության մակարդակը 2024 թվականին կայունացել է՝ կազմելով մոտ 13 տոկոս:

¹ Հայաստանի Հանրապետություն և ԱՄՆ, Երկրի վերաբերյալ տվյալներ՝ հետևյալ հղումով՝ <https://www.imf.org/en/Countries/ARM>, մատչվել է 2025 թվականի մայիսի 18-ին:

² ԱՄՆ-ի DataMapper՝ հետևյալ հղումով՝ <https://www.imf.org/external/datamapper/profile/ARM>, մատչվել է 2025 թվականի մայիսի 18-ին:

Դ. Հիմնական հարկերը

Հարկի եւ ՀՆԱ-ի հարաբերակցությունը վերջին տարիներին աճել է եւ 2023 թվականին կազմել է 22. 5 տոկոս:³ Հարկերի հիմնական տեսակների մասնաբաժինները 2024 թվականին (բացառությամբ մաքսային եկամուտները) հետևյալն են՝ ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ, որը կազմում է 33. 2 տոկոսը), անձնական եկամտային հարկը (ԱԵՀ, որը կազմում է հավաքագրման 28. 5 տոկոսը, այդ թվում 24. 3 տոկոսը, որը ստացվել է որպես վերջնական պահում գործատուներից) եւ կորպորատիվ եկամտային հարկը (ԿԵՀ, որը կազմում է հավաքագրման 14. 7 տոկոսը):

Հայաստանը ներդրել է եկամուտների համընդհանուր հայտարարագիրը (ԵՀՀ), որը գործում է 2024 ֆինանսական տարվանից, որպեսզի տեղեկություններ հավաքի 2023 թվականի հաշվետու տարվա և հետագա տարիների վերաբերյալ: Ընդհանուր առմամբ, սա պահանջում է, որ բոլոր չափահաս քաղաքացիները, որոնք բնակվում են Հայաստանում 183 օր եւ ավելի, ներկայացնեն տարեկան հայտարարագիր՝ ընդգրկելով եկամտի բոլոր աղբյուրները՝ հարկվող, թե չհարկվող: Համակարգը ներդրվում է էլեկտրոնային ստորագրությունների հետ զուգահեռ: 2024 թվականի հայտարարագրերի ներկայացման ժամկետը երկարաձգվել է մինչև 2025 թվականի նոյեմբեր:

Հարկային եկամուտների հավաքագրման վերաբերյալ լրացուցիչ մանրամասները ներկայացված են III հավելվածի 1-ին աղյուսակում:

Ե. Ինստիտուցիոնալ շրջանակը

2016 թվականին Պետական եկամուտների կոմիտեն (ՊԵԿ) առանձնացվել է Ֆինանսների նախարարությունից և դարձել է հարկային եւ մաքսային վարչարարության համար պատասխանատու մարմինը ՊԵԿ-ի գործող կանոնադրությունը հաստատվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ:

ՊԵԿ-ի առաքելությունն է.

«հարկային ծառայության մասով. ապահովել ՀՀ պետական բյուջեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների հավաքագրումը՝ թվայնացված ու բարձրորակ ծառայությունների մատուցմամբ, հասցեական ու անտեսանելի վարչարարությամբ հարկային կարգապահության բարելավման միջոցով, և

մաքսային ծառայության մասով. ապահովել տնտեսական անվտանգությունը, աջակցել ՀՀ տնտեսության կայուն զարգացմանը՝ արտաքին առևտրաշրջանառության խթանման, մաքսային

³ [Համաշխարհային զարգացման գուցակներ | DataBank](https://databank.worldbank.org/Tax-revenue-as-gdp-ratio/id/4da172e2)՝ հետևյալ հղումով՝ <https://databank.worldbank.org/Tax-revenue-as-gdp-ratio/id/4da172e2>

վարչարարության կատարելագործման, թվայնացված ու բարձրորակ ծառայությունների մատուցման և մաքսային հսկողության արդյունավետության բարձրացման միջոցով:»⁴

Բարձրագույն կառուցվածքային միավորներն են՝ նախագահը, նախագահի առաջին տեղակալը, նախագահի մյուս չորս տեղակալները (մեկը ներկայումս թափուր է) եւ գլխավոր քարտուղարը: Կառուցվածքը հիմնականում կազմակերպված է գործառնության խմբավորումների շուրջ, եւ նախագահին ներկայացվում են հաշվետվությունների ամբողջականության եւ անվտանգության հետ կապված գործառնությունները, նախագահի առաջին տեղակալին՝ հարկային ծառայության եւ կատարման հետ կապված գործառնությունները, իսկ ավելի լայն իմաստով՝ Մաքսային, ռազմավարական եւ միջազգային գործառնությունների վերաբերյալ հաշվետվություններ են ներկայացվում համապատասխանաբար նախագահի առանձին տեղակալներին: Գործառնական և վարչական գործառնությունների վերաբերյալ հաշվետվություններ են ներկայացվում գլխավոր քարտուղարին: Խոշոր հարկատուների տեսչությունն (որը գոյություն ուներ 2016 թվականին ՀՎԱԳԳ-ի վերջին գնահատման ժամանակ) այլևս գոյություն չունի, սակայն խոշոր հարկատուների պատասխանները համակարգվում են համապատասխանության բարելավման պլանի (ՀԲՊ) կիրառմամբ, որը կենտրոնացած է խոշոր հարկատուների վրա:

Հարկային վարչարարության կազմակերպական սխեման ներկայացված է IV հավելվածում:

2. Հարկային վարչարարության բարեփոխումների ներկա վիճակը

ԵՀՀ-ի իրականացումը նշանակալի զարգացում է հարկային քաղաքականության եւ վարչարարության եւ պետականաշինության մեջ: 2022 թվականին օրենսդրության ընդունման պահին այդ ժամանակ Ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանն ասել է.

«Հարկային մարմնի կողմից տրամադրված նույնականացման տվյալներով հայտարարատուն, մուտք գործելով հարկային հաշվետվությունների էլեկտրոնային համակարգ, այնտեղ կգտնի իր համար նախապես լրացված հայտարարագիրը, կստուգի լրացված տվյալների ճշգրտությունը, անհրաժեշտության դեպքում կկատարի փոփոխություններ կամ լրացումներ դրանցում եւ կհաստատի հայտարարագրերի վերջնական տարբերակը»:⁵

Վարչապետ պրն Նիկոլ Փաշինյանը նաեւ ներկայացրել է հարկային վարչարարությունից դուրս կարելության համատեքստը՝ նշելով.

«Պետության կարևորագույն ինստիտուտներից մեկի վերաբերյալ որոշում ենք կայացնում: Նման քայլերի տրամաբանությունը բխում է թերևս մեր գաղափարական այն արձանագրումից, որ պետությունը և Հայաստանի Հանրապետությունը կարող է հարատևել միայն նրա քաղաքացիների՝ պետություն ունենալու կամքի առկայության վրա: Այսինքն՝ պետությունը, առավել

⁴ ՊԵԿ-ի կայքը՝ <https://www.src.am/en/getMenusContents/212> հղումով

⁵ Հայաստանում ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգը փուլային տարբերակով կներդրվի 2023 թվականից. Մամուլ հաղորդագրություններ. Լրատվություն. Հայաստանի Հանրապետության վարչապետ

ևս ժողովրդավարական պետությունը հիմնվում է պետություն ունենալու քաղաքացիական կամքի վրա: Սա մի ինստիտուտ է, որը հենց այս կամքի արձանագրումն է: Քաղաքացին, ըստ էության, այս և մի շարք այլ ինստիտուտներով արձանագրում է պետություն ունենալու իր կամքը, և սա չափազանց կարևոր է»:

**ՊԵԿ-ի 2024 թվականի տարեկան հաշվետվությունում նշվում են նաեւ
Կառավարության որոշումների իրականացման ուղղությամբ գործողություններ⁶
վեց առանցքային ոլորտներում՝**

1) Էլեկտրոնային համակարգերի եւ ենթակառուցվածքների արդիականացում, 2) հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացում եւ մատուցվող ծառայությունների ընդլայնում, 3) ստվերային տնտեսության կրճատում՝ հարկային հսկողության ռիսկերի կառավարման համակարգերի կատարելագործման միջոցով, 4) մաքսային վերահսկողության արդյունավետության բարձրացում՝ մաքսային ռիսկերի կառավարման գործիքակազմի կատարելագործման միջոցով, 5) «Մեկ կանգառ, մեկ պատուհան» համակարգի կատարելագործումը եւ 6) միջազգային համագործակցության ամրապնդումը:⁷ Դա ի հավելումն մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի բարելավման է:

Նայելով ապագային՝ ՊԵԿ-ն ուսումնասիրում է նաեւ արհեստական

բանականության կիրառումը: Գնահատման ընթացքում թիմը տեղեկացավ, որ 2025

թվականի ապրիլի 17-ին ՊԵԿ-ը ստորագրել է փոխըմբռնման հուշագիր Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) հետ համագործակցության վերաբերյալ:

Համագործակցության մեկնարկին անցկացված սեմինարի ընթացքում ուսումնասիրվել է մեքենայական ուսուցման եւ արհեստական բանականության (ԱԲ) կիրառումը

Հայաստանի հարկային վարչարարությունում: ՊԵԿ-ի նախագահ պարոն Հակոբյանը նշել է, որ ՊԵԿ-ի եւ ՀԱՀ-ի միջեւ համագործակցությունը կնպաստի ուսանողներին եւ

հետազոտողներին ներգրավելու տվյալների վրա հիմնված ՊԵԿ նախաձեռնություններում նպաստելով մասնագետների նոր սերնդի վերապատրաստմանը՝ հանրային հատվածի

արդիականացման շարունակական ջանքերին համահունչ: ⁸

Է. Տեղեկությունների միջազգային փոխանակումը

Հայաստանը հանդիսանում է Հարկման նպատակով թափանցիկության եւ

տեղեկատվության փոխանակման գլոբալ ֆորումի անդամ եւ 2025 թվականի մարտին

հրապարակված երկրորդ փուլի համատեղ՝ գործընկերների կողմից արված

վերլուծությունում գնահատվել է որպես գլոբալ ֆորումի ստանդարտներին

⁶ Մասնավորապես՝ Կառավարության 18.08.2021թ. թիվ 1363-Ա որոշումը, Կառավարության 18.11.2021թ. թիվ 1902-Լ որոշումը եւ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 12.12.2019թ. թիվ 1830-Լ որոշումը:

⁷ 25 Տարեկան հաշվետվություն 27.03.2025.doc

⁸ ՀՀ ՊԵԿ՝ <https://www.src.am/en/getNews/993>

«հիմնականում համապատասխանող»:⁹ Հայաստանը տեղեկատվության փոխանակման (ՏՓ) վերաբերյալ պայմանավորվածություններ ունի 155 գործընկերների հետ՝ կրկնակի հարկման 52 համաձայնագրերի (ԿՀՀ-ներ), հարկային տեղեկությունների փոխանակման 6 համաձայնագրերի (ՀՏՓՀ-ներ) միջոցով, որպես «Հարկային հարցերում փոխադարձ վարչական աջակցության մասին» բազմակողմ կոնվենցիայի ստորագրող կողմ եւ որպես Անկախ պետությունների համագործակցության անդամ պետությունների միջեւ տեղեկությունների փոխանակման վերաբերյալ համաձայնագրի անդամ: **Ներմուծման եւ արտահանման առումով Հայաստանի հիմնական առեւտրային գործընկերներն են Ռուսաստանը, Չինաստանը, Շվեյցարիան, Գերմանիան եւ Իրանը:** Հայաստանն ունի ՏՓ պայմանավորվածություններ, որոնք ընդգրկում են այդ պետություններից յուրաքանչյուրը: Հայաստանը ՏՓ պայմանավորվածություններ չունի Ադրբեյջանի կամ Թուրքիայի հետ՝ երկու պետություններ, որոնք սահման ունեն Հայաստանի հետ:

⁹ ՏՀՀԿ (2025թ.), *Հարկման նպատակով թափանցիկության եւ տեղեկատվության փոխանակման գործադիր ֆորում*. Հայաստան 2025թ. (Երկրորդ փուլ, համատեղ ուսումնասիրություն). Ըստ պահանջի տեղեկությունների փոխանակման վերաբերյալ գործընկերների կողմից վերլուծության հաշվետվություն, Հարկման նպատակով թափանցիկության եւ տեղեկատվության փոխանակման գլոբալ ֆորում, ՏՀՀԿ հրատարակություն, Փարիզ, <https://doi.org/10.1787/d71a53f0-en>:

III. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ա. ԿԱՌ 1. Գրանցված հարկ վճարողների բազայի ամբողջականությունը

Հարկերի կառավարման հարցում հիմնարար նախնական քայլ է գրանցումը և համարակալումը:

Հարկային մարմինները պետք է կազմեն եւ վարեն այն ձեռնարկությունների եւ անհատների ամբողջական տվյալների բազա, որոնք օրենքով պահանջվում է գրանցել, և դրանք ներառում են հենց հարկ վճարողներին, ինչպես նաեւ այլոց, ինչպես օրինակ՝ գործատուներին, որոնք ունեն ՀՎԱ պահելու պարտականություններ: Յուրաքանչյուր հարկ վճարողի գրանցումը եւ համարակալումը հիմք են հանդիսանում փաստաթղթերի ներկայացման, վճարման, գնահատման եւ հավաքագրման հետ կապված հիմնական վարչական գործընթացների համար:

ԿԱՌ 1-ը գնահատելու համար օգտագործվում են կատարողականի երկու ցուցանիշներ.

- P1-1 — Հարկ վճարողների վերաբերյալ ճշգրիտ եւ հավաստի տեղեկություններ:
- P1-2 — Պոտենցիալ հարկ վճարողների բազայի իմացություն:

P1-1. Հարկ վճարողների վերաբերյալ ճշգրիտ եւ հավաստի տեղեկություններ

Այս ցուցանիշի համար գնահատվում են չափման երկու հարթություններ՝ 1)

հարկային վարչարարության գրանցման տվյալների բազայում պահվող տեղեկությունների պատշաճությունը եւ որքանով է այն աջակցում հարկ վճարողների եւ հարկային միջնորդների (այսինքն՝ հարկային խորհրդատուների եւ հաշվապահների) հետ արդյունավետ փոխգործակցությանը, եւ 2) տվյալների բազայում պահվող տեղեկությունների ճշգրտությունը: Գնահատված գնահատականները ներկայացված են 2-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 2. P1-1 Գնահատում

Չափման հարթությունները	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.		Գնահատական 2025թ.	
P1-1-1. Գրանցված հարկ վճարողների վերաբերյալ պահվող տեղեկությունների պատշաճությունը եւ որքանով է գրանցման տվյալների բազան աջակցում հարկ վճարողների եւ հարկային միջնորդների հետ արդյունավետ փոխգործակցությանը:	M1	B	D	A	B

P1-1-2. Գրանցման տվյալների բազայում պահվող տեղեկությունների ճշգրտությունը:		D		B	
--	--	---	--	---	--

ՊԵԿ-ը գործարկում է հարկ վճարողների գրանցման ազգային համակարգչային տվյալների բազա՝ գրանցման բոլոր ակնկալվող տվյալներով: Տվյալների բազան պարունակում է հարկ վճարողի անունը, հասցեն, ծննդյան (կամ հիմնադրման) ամսաթիվը եւ վայրը, Էլեկտրոնային փոստի հասցեն, արդյունաբերության կամ ոլորտի տեսակը, փոխկապակցված անձանց ինքնությունը, ինչպիսիք են սեփականատերերը, բաժնետերերը կամ կառավարիչները, հարկերի կոնկրետ տեսակների հետ կապված փաստաթղթերի ներկայացման եւ վճարման պարտավորությունները, եւ հարկ վճարողի նույնականացման համարը (ՀՎՀՀ): 8-նիշանոց ՀՎՀՀ-ը եզակի, բարձր ամբողջականություն ունեցող համար է՝ ներկառուցված ստուգման թվանշանով: Առաջնային գրանցումը կատարվում է Պետական ռեգիստրի գործակալությունում (ՊՌԳ), որը տվյալները է հավաքում նաեւ ազգային նույնականացման (ID) քարտից, որն ինքնին պարունակում է եզակի 10 նիշանոց, բարձր ամբողջականության սոցիալական ծառայության համարը (ՄԾՀ), ներառելով այնպիսի մանրամասներ, ինչպիսիք են սեռը եւ ծննդյան ամսաթիվը: ՊՌԳ-ն իրական ժամանակում տեղեկություններ է փոխանակում ՊԵԿ-ի հետ՝ հարկ վճարողների գրանցումը գործողության մեջ դնելու եւ ՊԵԿ-ին ՀՎՀՀ ստեղծելու հնարավորություն տալու համար: Համակարգը կարող է տվյալների դաշտերից գեներացնել կառավարչական եւ վիճակագրական տեղեկություններ:

ՊԵԿ-ում գործող գրանցման համակարգը փոխկապակցված է այլ համակարգերի հետ այնպես, որ ՊԵԿ-ի աշխատակազմը հարկ վճարողի մանրամասների վերաբերյալ հարկ վճարողի ամբողջական պատկերացում ունենա, այդ թվում փաստաթղթերի ներկայացման և վճարման գործունեությունը, եւ թե արդյոք հարկ վճարողը չի գործում, թե գրանցումից հանված է: Տվյալներն արտացոլվում են յուրաքանչյուր հարկ վճարողի առցանց «կաբինետում» (հարկատուների պորտալում): Հարկ վճարողները կարող են թարմացնել իրենց կոնտակտային տվյալներն իրենց կաբինետում, կատարել վճարումներ եւ ստուգել, թե արդյոք վճարումները տեղադրված են իրենց հաշվին: ՊԵԿ աշխատակազմի կամ հարկ վճարողների կողմից կատարված փոփոխությունները գրանցվում են համակարգի աուդիտի մատյաններում: Տվյալներն օգտագործվում են հարկային հայտարարագրերի հիմնական նախնական լրացման համար: Գրանցման տվյալների բազայի հետ կապված տվյալների բովանդակությունը, ֆունկցիոնալությունը եւ ամբողջականության չափանիշները համահունչ են միջազգային լավ գործելակերպին:

Այլ գործակալությունների տվյալների խաչաձեւ ստուգման որոշակի աշխատանքներ կան, սակայն դրանք սահմանափակ են: Այն հարկ վճարողների առնչությամբ, որոնք գուցե չեն գրանցվել, առկա է որոշակի համապատասխան տվյալների փոխանակում ՊՌԳ-ի եւ Կենտրոնական բանկի (ԿԲ) հետ: Կենտրոնական բանկի հետ խաչաձեւ ստուգումն, ըստ երեւույթին, ներառում է ԿԲ-ի կողմից

հաստատումը, թե արդյոք հարկ վճարողի կողմից առաջադրված բանկային հաշիվը կապված է այդ հարկ վճարողի հետ, սակայն ՊԵԿ-ին բոլոր բանկային հաշիվների մանրամասների ինքնաբուխ տրամադրում չի գործում: Քանի որ ՊՌԳ-ն հարկ վճարողների գրանցման տվյալների առաջնային աղբյուրն է, այս աղբյուրի հետ խաչաձեւ ստուգումը բավարար չէ գրանցման տվյալների բազայի ամբողջականության ցուցանիշ հանդիսանալու համար: ՍԾՀ-ի եւ ազգային ID քարտի ներառումը ՊՌԳ-ում գրանցման գործընթացում վստահություն է ներշնչում գրանցման համար դիմող կողմերի անձեռնմխելիության նկատմամբ: Առցանց գործարքների համար ազգային նույնականացման քարտը լրացնելու նպատակով ներդրվում է Էլեկտրոնային թվային ստորագրության համակարգ: 2023 թվականին ներկայացվ է ներքին աուդիտի հաշվետվություն՝ կապված ապօրինի ձեռնարկատիրության (չգրանցված հարկ վճարողների) հետ, որտեղ նշվել է նաեւ Մաքսային ծառայության եւ Էներգամատակարարների տվյալների լրացուցիչ խաչաձեւ ստուգում: Ներքին աուդիտի հաշվետվության մեջ վստահություն է հայտնվել գրանցման տվյալների նկատմամբ՝ միաժամանակ խորհուրդ տալով ռիսկերի գնահատման հետագա գործողություններ:

P1-2. Պոտենցիալ հարկ վճարողների բազայի իմացություն

Այս ցուցանիշը չափում է հարկային վարչարարության ջանքերի ծավալը՝ ուղղված չգրանցված ձեռնարկություններն ու անհատներին հայտնաբերելուն: Գնահատված գնահատականը ներկայացված է 3-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 3. P1-2 Գնահատում

Չափման հարթությունը	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.	Գնահատական 2025թ.
P1-2. Այն ձեռնարկությունների եւ անհատների հայտնաբերմանն ուղղված նախաձեռնությունների ծավալը, որոնցից պահանջվում է գրանցվել, սակայն նրանք դա չեն անում:	M1	B	C

Չգրանցված հարկ վճարողներին հայտնաբերելուն ուղղված

Նախաձեռնություններն *ad hoc* են: Առկա էին ապացույցներ չգրանցված հարկ վճարողներին հայտնաբերելու որոշ տարրեր պարունակող մարտավարական պլանների, այլ ոչ թե ընդհանուր գործառնական ծրագրի վերաբերյալ: Մարտավարական պլանների մեջ հայտնաբերման հիմնական հայտնաբերման մեթոդը կարծես թե դաշտային ստուգումն էր, եւ յուրաքանչյուր դաշտային գործողության մեջ առնվազն հինգից մեկ օրը կիրառվում էր «ապօրինի ձեռնարկատիրության դեպքերը հայտնաբերելու համար»: Չգրանցված հարկ վճարողների հայտնաբերման համար երրորդ կողմերից ստացված տվյալների համակարգային օգտագործման ապացույցներ առկա չէին

Բ. ԿԱՌ 2. Ռիսկերի արդյունավետ կառավարում

Հարկային մարմինները բախվում են բազմաթիվ ռիսկերի, որոնք հնարավոր է, որ բացասաբար անդրադառնան եկամուտների եւ (կամ) հարկային մարմնի գործունեության վրա: Հարմարավետության համար այս ռիսկերը կարող են դասակարգվել հետևյալ կարգով.

- Համապատասխանության ռիսկեր՝ երբ եկամուտները կարող են կորցնել, եթե ձեռնարկությունները եւ անհատները չեն կատարում հարկ վճարողների չորս հիմնական պարտավորությունները (այսինքն՝ հարկային համակարգում գրանցում, հարկային հայտարարագրերի ներկայացում, հարկերի ժամանակին վճարում եւ հայտարարագրերում տեղեկությունների ամբողջական եւ ճշգրիտ հաշվետվություն), եւ
- Ինստիտուցիոնալ ռիսկեր՝ որտեղ հարկային մարմնի գործառույթները կարող են ընդհատվել, եթե որոշակի արտաքին կամ ներքին իրադարձություն տեղի ունենա, ինչպիսիք են բնական աղետները, սաբոտաժը, ֆիզիկական ակտիվների կորուստը կամ ոչնչացումը, ՏՏ համակարգի սարքաշարի կամ ծրագրաշարի խափանումը, աշխատակիցների գործադուլը եւ վարչական խախտումները (օրինակ՝ հարկ վճարողների գաղտնի տեղեկությունների արտահոսքը, որը հանգեցնում է հարկային մարմնի հանդեպ համայնքի վստահության եւ վստահելիության կորստի): ՀՎԱԳԳ-ի նպատակներով՝ ինստիտուցիոնալ ռիսկը բաժանվում է երկու բաղադրիչի: Դրանք են՝
 - *Գործառնական ռիսկ*՝ վերաբերում է խաթարող գործողություններին, որոնք ոչնչացնում կամ ազդում են մարմնի ակտիվների եւ ռեսուրսների մի մասի կամ ամբողջության վրա, ինչպիսիք են շենքերը, ՏՏ եւ այլ սարքավորումները, տվյալները եւ գրառումները, եւ
 - *Մարդկային կապիտալի ռիսկ*՝ վերաբերում է ընդհատումներին, որոնք ազդում են հարկային վարչարարության վրա, որոնք առաջանում են աշխատակիցների և նրանց կողմից հնարավորությունների, կարողությունների, համապատասխանության, ծախսերի եւ կապի (ներգրավման) բացերի արդյունքում:

Ռիսկերի կառավարումը կարելու է արդյունավետ հարկային վարչարարության համար եւ ներառում է ռիսկերի բացահայտման, գնահատման, առաջնայնացման եւ մեղմացման կառուցվածքային մոտեցում: Այն բազմամյա ռազմավարական եւ տարեկան օպերատիվ պլանավորման անբաժանելի մասն է:

ԿԱՌ 2-ը գնահատելու համար օգտագործվում են կատարողականի հինգ ցուցանիշներ.

- P2-3 — Համապատասխանության ռիսկերի բացահայտում, գնահատում, դասակարգում եւ քանակականացում:

- P2-4 — Ռիսկերի մեղմացում համապատասխանության բարելավման պլանի միջոցով:
- P2-5 — Համապատասխանության ռիսկերի մեղմացման միջոցառումների մոնիթորինգ եւ գնահատում:
- P2-6 — Գործառնական (այսինքն՝ համակարգերի և գործընթացների) ռիսկերի կառավարում:
- P2-7 — Մարդկային կապիտալի ռիսկերի կառավարում:

P2-3. Համապատասխանության ռիսկերի բացահայտում, գնահատում, դասակարգում եւ քանակականացում

Այս ցուցանիշի համար գնահատվում են չափման երկու հարթություններ՝ 1) հետախուզական տվյալների հավաքման եւ հետազոտության շրջանակը՝ հարկային համակարգին սպառնացող ռիսկերը բացահայտելու համար, եւ 2) համապատասխանության ռիսկերը գնահատելու, դասակարգելու եւ չափելու գործընթացը: Գնահատված գնահատականները ներկայացված են 4-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 4. P2-3 Գնահատում

Չափման հարթությունները	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.		Գնահատական 2025թ.	
P2-3-1. Հետախուզական տվյալների հավաքման եւ հետազոտության ծավալը՝ հիմնական հարկային պարտավորությունների հետ կապված համապատասխանության ռիսկերը բացահայտելու համար:	M1	B		C	
P2-3-2. Հարկ վճարողների համապատասխանության ռիսկերը գնահատելու, դասակարգելու եւ քանակականացնելու գործընթացը:		C		A	

ՊԵԿ-ը շրջակա միջավայրի սկանավորումները որպես համապատասխանության ընթացիկ եւ առաջացող ռիսկերի բացահայտման գործընթացի մաս չի օգտագործում: ՊԵԿ-ն իրականացնում է ոլորտային վերլուծություններ եւ օգտագործում է մի շարք երրորդ կողմերի տեղեկություններ տարբեր աղբյուրներից (օրինակ՝ ընկերությունների գրանցման գրասենյակ, սեփականության կադաստրեր,

նստիկանություն եւ այլն), սակայն հետախուզական տվյալների հավաքման եւ հետազոտական նախաձեռնությունները հիմնական մակարդակի վրա են : Առկա չէին ապացույցներ սկանավորման այնպիսի տեխնիկաների օգտագործման վերաբերյալ, ինչպիսիք են ՌԻԹՀՎ-ը¹⁰ կամ ԶSUSԻԲ¹¹-ը, քննարկելու համար, թե ինչպես կարող են արտաքին գործոններն ազդել համապատասխանության ռիսկի վրա:

Համապատասխանության ռիսկերի գնահատման համար նախատեսված ռիսկերի գնահատման գործընթացը համահունչ է միջազգային լավ գործելակերպին:

Համապատասխանության ռիսկերի կառավարումը (ՀՌԿ) ղեկավարվում է համապատասխանության ընդհանուր ռազմավարությամբ: Հարկային օրենսգիրքը պահանջում է ռիսկերի վրա հիմնված մոտեցում եւ ռիսկերի չափանիշների սահմանման գործընթաց, որոնք պարունակվում են կառավարության պաշտոնական որոշման մեջ: ՀՌԿ ռազմավարության նպաստում է ռիսկերի բացահայտման, վերլուծության եւ առաջնայնացման կառուցվածքավորված շրջանակը, այդ թվում կառավարության որոշումը, որը պահանջում է ստեղծել ռիսկերի ռեգիստր, որին հասանելիություն ունեն բոլոր աշխատակիցները: Եռամսյակային հաշվետվությունները պարտադիր են: Թեև տարրերը պահպանվում են «Excel» թերթում, գոյություն ունի նաեւ ավելի բարդ տեղեկատվական տեխնոլոգիական (SS) լուծում, որը թույլ է տալիս ընդգրկել գնահատականները: Ռիսկի գնահատականները տրվում են կոնկրետ հարկատուներին՝ հաշվի առնելով, օրինակ, պահանջներին չհամապատասխանության հավանականությունը եւ հետեւանքները: Ռիսկի գնահատականներն օգտագործվում են ավելի բարձր ռիսկային ոլորտների ՀԲՊ-ների մշակման մեջ:

P2-4. Ռիսկերի մեղմացում համապատասխանության բարելավման պլանի միջոցով

Այս ցուցանիշով ուսումնասիրվում է, թե որքանով է հարկային մարմինը ձեւակերպել համապատասխանության բարելավման ծրագիրը՝ բացահայտված ռիսկերը վերացնելու համար: Գնահատված գնահատականը ներկայացված է 5-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

¹⁰ Ուժեղ կողմեր, թույլ կողմեր, հնարավորություններ, վտանգներ: Բնապահպանական սկանավորման հաճախակի օգտագործվող տեխնիկա:

¹¹ Քաղաքական, տնտեսական, սոցիալական, տեխնոլոգիական, իրավական, բնապահպանական: Կազմակերպության համար արտաքին հանդիսացող միջավայրի սկանավորման հաճախակի օգտագործվող տեխնիկա:

Աղյուսակ 5. P2-4 գնահատում

Չափման հարթությունը	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.	Գնահատական 2025թ.
P2-4. Որքանով է հարկային մարմինը համապատասխանության բարելավման ծրագրի միջոցով մեղմացնում հարկային համակարգին սպառնացող գնահատված ռիսկերը:	M1	D	A

Ընտրված ոլորտների համար մշակվել է համապատասխանության բարելավման պլանների խումբ, որն ընդգրկում է ամենաբարձր ռիսկերը սպառնացող ոլորտները:

ՀԲՊ-ները մշակվում են օպերատիվ դաշտային գրասենյակների հետ համատեղ եւ ներառվում են տարբեր օպերատիվ գործողությունների գործունեության մեջ: Դրանց թվում են խոշոր հարկատուները, որոնց շրջանառությունը գերազանցում է 400 մլն դրամը, շինարարության ոլորտը, ներմուծողներն ու արտահանողները, օտարերկրյա տնտեսվարողները, մսի արտադրությունը, հանքարդյունաբերությունը եւ տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծումը: Համապատասխան ՀԲՊ-ներից յուրաքանչյուրում հաշվի է առնվում կոնկրետ ոլորտը տարբեր հարկերի տեսակների տեսանկյունից եւ համապատասխանության հիմնական պարտավորությունները՝ միջազգային լավ գործելակերպին համահունչ:

Համապատասխանության բարելավման պլանների ռեսուրսներն ապահովվում են տարածաշրջաններում հատուկ կարողությունների միջոցով, որոնք իրենց գործառնական գործունեությունը կենտրոնացնում են ավելի մեծ ռիսկային ոլորտների վրա: Ընթացիկ ՀԲՊ-ների մասով ընտրված առավել ռիսկային ոլորտներից յուրաքանչյուրի համար մանրամասն ներկայացվում են գործառնական մակարդակում պահանջվող հատուկ միջոցառումները: Իրականացման ընթացքը վերահսկվում է ՊԵԿ-ի զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության Ռազմավարության մշակման և համակարգման բաժնի կողմից՝ օգտագործելով նախագծերի կառավարման մեթոդաբանություններ:

P2-5. Համապատասխանության ռիսկերի մեղմացման միջոցառումների մոնիթորինգ եւ գնահատում

Այս ցուցանիշը դիտարկում է համապատասխանության մեղմացման միջոցառումները վերահսկելու եւ գնահատելու գործընթացը: Գնահատված գնահատականը ներկայացված է 6-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 6. P2-5 Քնահատում

Չափման հարթությունը	Քնահատման մեթոդը	Քնահատական 2016թ.	Քնահատական 2025թ.
P2-5. Համապատասխանության ռիսկերի մեղմացման միջոցառումների ազդեցության մոնիթորինգի եւ գնահատման համար օգտագործվող գործընթացը:	M1	D	C

Համապատասխանության ռիսկերի մեղմացմանն ուղղված գործողությունները մոնիթորինգի ենթարկելու և դրանց ազդեցությունը գնահատելու համար օգտագործվող գործընթացը թույլ զարգացած է: Կազմվում են հաշվետվություններ ՀԲԴ-ների առաջընթացի մասին: Այդ հաշվետվություններով կանոնավոր կերպով կիսվում են ավագ ղեկավար կազմի հետ «Mulberry» Էլեկտրոնային կառավարման եւ փաստաթղթերի կառավարման հարթակի միջոցով: Ավագ ղեկավար կազմի մակարդակում պաշտոնական կառավարման գործընթացի վերաբերյալ Նշում առկա չէր: Ռիսկերի խորհուրդը պարտավոր է հանդիպում անցկացնել եռամսյակային կտրվածքով, սակայն վերջին անգամ հանդիպում է անցկացրել 2024 թվականի ապրիլին: Ավագ ղեկավար կազմի մակարդակում մոնիթորինգը եւ գնահատումը կարծես թե [ad hoc են կատարվում](#):

P2-6. Գործառնական ռիսկերի կառավարում

Այս ցուցանիշն ուսումնասիրում է, թե ինչպես է հարկային մարմինը կառավարում մարդկային ռեսուրսների հետ կապված ռիսկերից բացի այլ գործառնական ռիսկերը: Քնահատված գնահատականը ներկայացված է 7-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 7. P2-6 Քնահատում

Չափման հարթությունները	Քնահատման մեթոդը	Քնահատական 2016թ.		Քնահատական 2025թ.	
P2-6-1. Գործառնական ռիսկերը բացահայտելու, գնահատելու եւ մեղմացնելու համար օգտագործվող գործընթացը:	M1	C		C	
P2-6-2. Բիզնեսի շարունակականության ծրագրի արդյունավետության ստուգման, մոնիթորինգի եւ գնահատման ծավալը:		-	C	C	C

ISO 27001 ստանդարտին համապատասխանությունն ապահովում է հուսալի տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների գործառնական ռիսկերի կառավարում, սակայն չի ընդգրկում հարկային վարչարարության գործառնական ռիսկի բոլոր հայեցակետերը: ISO 27001 ստանդարտին համապատասխանության պահանջները նշանակում են, որ տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների (S&S) համակարգերի հետ կապված ռիսկերի գնահատման, առաջնայնացման, կառավարման եւ մեղմացման նկատմամբ կառուցվածքային մոտեցում է առկա, այդ թվում բիզնեսի ազդեցության գնահատումները: ՊԵԿ-ը ներառում է նաեւ S&S ռիսկերի կառավարման այլ գործելակերպեր, ինչպիսիք են ռիսկերի վերլուծության համապարփակ եւ կառուցվածքային ռեգիստրը, SS-ին հատուկ ռիսկերի վերացման պլանը, կրկնօրինակ պահուստային կայքի վարումը, SS կապալառուների պատշաճ ուսումնասիրությունը, ներթափանցման փորձարկումները եւ այլն:

Բիզնեսի շարունակականության եւ մասնավորապես ոչ SS ոլորտների առնչությամբ մոտեցումը դեռեւս բավարար չափով կառուցվածքավորված եւ համակարգված չէ:

Հանձնարարվել են բիզնեսի շարունակականության որոշ գործընթացներ եւ գործառնական ռիսկերի կառավարման պարտականություններ: Դա ներառում է միջադեպերի կառավարման վերաբերյալ որոշումներ, քաղաքացիական պաշտպանության մանրամասն պլան, արտակարգ իրավիճակների դեպքում հաղորդակցության շղթա եւ տարհանման դեպքում փրկարարական, առաջին օգնության եւ հրդեհաշիջման հետ կապված հանձնարարված դերեր: Այնուամենայնիվ, գործառնական ռիսկերը համակարգված կերպով չեն բացահայտվում, գնահատվում, առաջնայնացվում, մեղմացվում եւ փաստաթղթավորվում ռիսկերի գրանցամատյանում: Ոչ մի ապացույց չկա ավելի լայն բիզնեսի ազդեցության վերլուծություն իրականացվելու կամ գործառնական ռիսկերը կազմակերպության կատարողականին համապատասխանելու կամ հստակ արտահայտված ռիսկի ախորժակի կամ հանդուրժողականության վերաբերյալ: Ոչ մի ապացույց չկար, որ անձնակազմը ստուգվել է իր գործառնական ռիսկերի կառավարման դերերի մասով, կամ բիզնեսի ազդեցության պաշտոնական վերլուծության կամ բիզնեսի շարունակականության վարժությունների արդյունքների փաստաթղթավորման մասին: Ընդհանուր գործառնական ռիսկերի կառավարման հետ կապված կար միայն հիմնական կարողություն:

P2-7. Մարդկային կապիտալի ռիսկերի կառավարում

Այս ցուցանիշն ուսումնասիրում է, թե ինչպես է հարկային մարմինը կառավարում մարդկային կապիտալի ռիսկերը: Գնահատված գնահատականը ներկայացված է 8-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 8. P2-7 գնահատում

Չափման հարթությունները	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.		Գնահատական 2025թ.	
P2-7-1. Որքանով է հարկային մարմնում գործում կարողություն եւ կառույցներ՝ մարդկային կապիտալի ռիսկերը կառավարելու համար:	M1	-		D	D
P2-7-2. Հարկային մարմնի կողմից մարդկային կապիտալի ռիսկերի կարգավիճակի եւ դրա հետ կապված մեղմացման միջամտությունները գնահատման աստիճանը:		-	-	D	

ՊԵԿ-ը չունի մարդկային կապիտալի ռիսկերը գնահատելու, առաջնայնացնելու եւ մեղմացնելու պաշտոնական գործընթացներ: Գոյություն ունի մարդկային ռեսուրսների (ՄՐ) ռիսկերի հիմնական ռեգիստր, որը փաստաթղթային ձևով ներկայացնում է մարդկային կապիտալի հետ կապված որոշ ընդհանուր ռիսկեր, եւ ՊԵԿ-ը ներդրել է կատարողականի վրա հիմնված համակարգ՝ անձնակազմին պարզեցնելու համար: Ռիսկերի ռեգիստրը ներառում է պարզ գնահատման շրջանակ, սակայն չի փորձում դասակարգել կամ առաջնայնացնել ռիսկերը եւ չի առաջարկում ռիսկերի նվազեցման կամ վերացման ռազմավարություններ: Մարդկային ռեսուրսների ռիսկի հետ կապված խնդիրներն ուսումնասիրելու կամ մեղմացման միջոցներ ուղղելու համար ակտիվ կառավարման կառուցվածքի ապացույցներ չկան: Գործառնական կառավարիչները չեն ստանում մասնագետների կողմից իրականացվող վերապատրաստում մարդկային կապիտալի ռիսկերի կառավարման հարցում: Չկան ապացույցներ ՄՐ համակարգի և գործառնականությունների արտաքին ստուգման վերաբերյալ:

ՊԵԿ-ը չունի մարդկային կապիտալի ռիսկերը գնահատելու կամ մեղմացնելու գործընթաց: Առանց մարդկային կապիտալի ռիսկերի գնահատման եւ կառավարման ֆորմալ համակարգի՝ մեղմացման արձագանքների արդյունավետ գնահատման հնարավորություն չկա: ՊԵԿ-ն իր տարեկան հաշվետվությունում մարդկային կապիտալի հետ կապված խնդիրների վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում, սակայն այն պաշտոնական գնահատում չունի :

Գ. ԿԱՌ 3. Աջակցություն պահանջների կամավոր կատարմանը

Հարկային համակարգի նկատմամբ պահանջներին կամավոր համապատասխանությունը եւ հանրային վստահությունը խթանելու համար՝

հարկային մարմինները պետք է ծառայությունների վրա կենտրոնացած վերաբերմունք ցուցաբերեն հարկ վճարողների նկատմամբ՝ ապահովելով, որ հարկ վճարողներն ունենան անհրաժեշտ տեղեկություն եւ աջակցություններ՝ իրենց պարտավորությունները կատարելու եւ օրենքով սահմանված իրենց իրավունքների առկայությունն պահանջելու համար: Քանի որ քիչ հարկ վճարողներ են օգտագործում հենց օրենքը՝ որպես տեղեկատվության հիմնական աղբյուր, հարկային մարմնի աջակցությունը վճարող դեր է խաղում գիտելիքների բացը փակելու հարցում: Հարկ վճարողներն ակնկալում են, որ հարկային մարմինը կտրամադրի ամփոփ, հասկանալի տեղեկություններ, որոնց կարող են ապավինել:

Կարելու է նաեւ հարկ վճարողների ծախսերը նվազեցնելու ուղղված ջանքերը:

Փոքր բիզնեսներն օրինակ օգտվում են պարզեցված հաշվառման եւ հաշվետվությունների ներկայացման պահանջներից: Նմանապես, համեմատաբար պարզ հարկային պարտավորություններ ունեցող անհատներն (օրինակ՝ աշխատողներ, թոշակառուներ եւ պասիվ ներդրողներ) օգտվում են պարզեցված փաստաթղթերի ներկայացման ձեւակերպումից եւ համակարգերից, որոնք վերացնում են փաստաթղթերի ներկայացման անհրաժեշտությունը:

ԿԱՌ 3-ը գնահատելու համար օգտագործվում են կատարողականի չորս ցուցանիշներ.

- P3-8 — Տեղեկությունների ծավալը, արժույթը եւ մատչելիությունը:
- P3-9 — Տեղեկատվության վերաբերյալ հարցումներին պատասխանելու համար պահանջվող ժամանակը:
- P3-10 — Հարկ վճարողների համապատասխանության ծախսերի նվազեցմանն ուղղված նախաձեռնությունների շրջանակը:
- P3-11 — Ապրանքների եւ ծառայությունների վերաբերյալ հարկ վճարողների հետադարձ կապի ստացում:

P3-8. Տեղեկությունների ծավալը, արդիականությունը եւ մատչելիությունը

Այս ցուցանիշի համար գնահատվում են չափման չորս հարթություններ՝ 1) արդյոք հարկ վճարողներն ունեն իրենց պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ տեղեկությունները, 2) արդյոք հարկ վճարողներին հասանելի տեղեկություններն արտացոլում են գործող օրենսդրությունը եւ վարչական քաղաքականությունը, 3) որքանով է հարկ վճարողների համար դյուրին տեղեկություններ ստանալը: Գնահատված գնահատականները ներկայացված են 9-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 9. P3-8 Քնահատում

Չափման հարթությունները	Քնահատման մեթոդը	Քնահատական 2016թ.		Քնահատական 2025թ.	
P3-8-1. Հարկ վճարողներին հասանելի տեղեկությունների բազմազանությունը՝ հստակ բացատրելու համար, թե ինչ պարտականություններ եւ իրավունքներ ունեն յուրաքանչյուր հիմնական հարկի առնչությամբ:	M1	A		A	B
P3-8-2. Տեղեկությունների արդիականության աստիճանը օրենքի եւ վարչական քաղաքականության տեսանկյունից:		A	A	B	
P3-8-3. Հարկ վճարողների կողմից հարկային մարմնից տեղեկություններ ստանալու ոլորտի նույնությունը		A		A	

Հարկ վճարողների հիմնական պարտավորությունների եւ իրավունքների մասին տեղեկությունները հեշտ հասանելի են բոլոր հիմնական հարկերի առնչությամբ:

ՊԵԿ-ի կայքը պարունակում է տեղեկություններ հարկ վճարողների պարտավորությունների հիմնական ոլորտների (հարկային հայտարարագրերում տեղեկությունների գրանցում, փաստաթղթերի ներկայացում, վճարում եւ հաշվետվություն) եւ իրավունքների վերաբերյալ: Կայքն ունի հարկային օրացույց, որտեղ նշված են հարկային հայտարարագրերի եւ վճարումների ներկայացման ժամկետները: Կայքը պարունակում է նաեւ հարկ վճարողների տարբեր ուղեցույցներ, օրինակ՝ եկամտային հարկի հաշվարկներ, հարկային հաշվետվությունների ներկայացում, եկամտային հարկի վճարում եւ մի քանի այլ թեմաներ: Առկա են կայքի անգլերեն եւ ռուսերեն տարբերակները, թեեւ հայերեն տարբերակը պարունակում է ավելի ծավալուն եւ մանրամասն տեղեկություններ՝ համեմատած անգլերեն տարբերակի հետ: Էլեկտրոնային հարկային համակարգն ապահովում է հարկային հայտարարագրերի եւ վճարումների եւ հարակից տեղեկությունների առցանց ներկայացում:

Տեղեկությունները համապատասխանեցված են հարկ վճարողների հիմնական հատվածների, արդյունաբերության հիմնական խմբերի, հարկային միջնորդների եւ անապահով խմբերի կարիքներին:

ՊԵԿ-ը պաշտոնական կայքի եւ սոցիալական մեդիայի ալիքների միջոցով տրամադրում է հարկ վճարողների տարբեր հատվածներին, քիզնես ոլորտներին եւ հարկային միջնորդներին համապատասխանեցված

տեղեկություններ: Այս օրինակները ներառում են ԵՀՀ-ի իրականացման, տաքսի ծառայությունների, անշարժ գույքի վարձակալության, շրջանառության հարկ վճարողների, արտադրանքի մակնշման եւ օտարերկրյա քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ: ՊԵԿ-ն իրականացնում է խոցելի խմբերի իրազեկման միջոցառումներ: Կայքը գործիք է տրամադրում տեսողական խնդիրներ ունեցողների համար: Հարկ վճարողների սպասարկման կենտրոնների մուտքը դյուրացվում է սայլակների թեքահարթակների միջոցով:

ՊԵԿ-ն ունի հարկային օրենսդրության եւ վարչական ընթացակարգերի վերաբերյալ տեղեկությունների թարմացման եւ արդիականացման մեթոդաբանություն եւ հատուկ տեխնիկական անձնակազմ: Տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժինը մի քանի պարտականություններ ունի՝ կապված կայքի եւ սոցիալական մեդիայի կառավարման հետ: Բաժինը պատասխանատու է ապահովելու համար, որ ՊԵԿ կայքում առկա բոլոր տեղեկություններն արդիական, ճշգրիտ եւ գրավիչ լինեն:

Հարկ վճարողները պարբերաբար տեղեկացվում են հարկային օրենսդրության փոփոխությունների մասին: Հենց որ ՊԵԿ-ը տեղեկացնում է, որ տեղի կունենա հարկային օրենսդրության փոփոխություն կամ կառաջանան հարկ վճարողների վրա ազդող վարչական ընթացակարգեր, կազմակերպությունը սկսում է նախապատրաստական աշխատանքներ՝ սպասվող փոփոխությունների մասին հարկ վճարողներին ընդհանուր տեղեկություններ տրամադրելու համար: Երբ կառավարության մտադրությունները հրապարակային են, իրազեկման արշավներ են մեկնարկում: Կոնկրետ տեղեկությունները հարկ վճարողների համապատասխան ազդակիր խմբերի համար թիրախավորելու առօրյա գործընթացի վերաբերյալ ապացույցներ առկա չէին:

Ակտիվ վերապատրաստման և ուսուցման ծրագրերը տրամադրվում են մի շարք ուղիներով, այդ թվում՝ ուսումնական կենտրոնի միջոցով: Ուսումնական կենտրոնը հյուրընկալում է դասընթացների համապարփակ կատալոգ, որն ընդգրկում է հարկային վարչարարության բազմաթիվ ոլորտներ: Վերապատրաստման դասընթացների համար վճար կա, սակայն բիզնես համայնքի արձագանքն այն է, որ վճարները նվազագույն են, իսկ դասընթացները՝ օգտակար եւ հասանելի: Բացի այդ, ՊԵԿ-ը հարկ վճարողներին տեղեկություններ է տրամադրում զանգերի կենտրոնի, Էլեկտրոնային հարցումների համակարգի, հարկ վճարողների սպասարկման վարչության եւ սոցիալական մեդիայի հարթակների միջոցով, օրինակ՝ «YouTube»-ի եւ «Facebook»-ի միջոցով: Այս ալիքներում տեղեկություններն անվճար են: Հարկ վճարողների բոլոր պարտավորություններն ու իրավունքները կառավարվում են ՊԵԿ-ի թվային միջավայրի միջոցով, իսկ ՊԵԿ-ի կայքը եւ հարկ վճարողների պորտալի (հարկ վճարողների կաբինետ) ինքնասպասարկման ծառայությունները հասանելի են 24/7 ռեժիմով:

P3-9. Տեղեկատվության վերաբերյալ հարցումներին պատասխանելու համար պահանջվող ժամանակը:

Այս ցուցանիշն ուսումնասիրում է, թե որքան արագ է հարկային մարմինն արձագանքում հարկ վճարողների եւ հարկային միջնորդների տեղեկատվության

վերաբերյալ հարցումներին (այս հարթության համար հեռախոսային հարցման զանգերի սպասման ժամանակն օգտագործվում է որպես փոխարինող՝ չափելու համար հարկային մարմնի կատարողականն ընդհանրապես տեղեկատվության վերաբերյալ հարցումների ժամանակ): Գնահատված գնահատականները ներկայացված են 10-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 10. P3-9 Գնահատում

Չափման հարթությունը	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.	Գնահատական 2025թ.
P3-9. Հարկ վճարողների և հարկային միջնորդների տեղեկատվության վերաբերյալ հարցումներին պատասխանելու համար պահանջվող ժամանակը:	M1	A	A

Հարկ վճարողներն իրենց հարցերի վերաբերյալ ժամանակին տեղեկություններ են ստանում հեռախոսային հարցումների միջոցով: ՊԵԿ-ը գործարկում է կենտրոնացված զանգերի կենտրոն՝ համապատասխան հեռախոսակապի կառավարման եւ մոնիթորինգի ծրագրաշարով: ՊԵԿ-ը ներդրել է ծառայությունների մատուցման ստանդարտներ: ՊԵԿ-ի զանգերի կենտրոն ստացված զանգերի մոտավորապես 81 տոկոսին պատասխանում են 6 րոպեի ընթացքում:

P3-10. Հարկ վճարողների համապատասխանության ծախսերի նվազեցմանն ուղղված նախաձեռնությունների շրջանակը

Այս ցուցանիշն ուսումնասիրում է հարկային մարմինների ջանքերը՝ ուղղված հարկ վճարողների պահանջներին համապատասխանության հետ կապված ծախսերը նվազեցնելուն: Գնահատված գնահատականները ներկայացված են 11-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 11. P3-10 Գնահատում

Չափման հարթությունը	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.	Գնահատական 2025թ.
P3-10. Հարկ վճարողների համապատասխանության ծախսերի նվազեցմանն ուղղված նախաձեռնությունների ծավալը:	M1	B	B

Առկա են հարկ վճարողների համապատասխանության հետ կապված ծախսերի նվազեցմանն ուղղված մի շարք նախաձեռնություններ: Ավել փոքր բիզնեսների, այդ թվում՝ այն բիզնեսների համար, որոնք՝ ԱԱՀ-ի և ԿԵՀ-ի ամբողջական մասնակցության

փոխարեն գործում են միայն շրջանառության հարկի համակարգով, գործում է հաշվետվողականության և հաշվառման պարզեցված համակարգ: Հաճախ տրվող հարցերը պարբերաբար վերլուծվում են՝ հարկ վճարողների համար նախատեսված տեղեկատվական պրոդուկտները և ծառայությունները բարելավելու համար: Հարկ վճարողների պորտալը («կաբինետ») ապահովում է գրանցման և հարկային հաշիվների մանրամասների 24-ժամյա հասանելիություն հարկ վճարողների եւ նրանց լիազոր ներկայացուցիչների համար: Ոչ մի ապացույց չկար, որ հարկային ձեւաթղթերը պարբերաբար վերանայվում են՝ այն տեղեկությունների վերաբերյալ անհարկի հարցումները հեռացնելու համար, որոնք կարող են առավել դյուրին կերպով ստացվել այլ տեղերից, կամ որոնք այլևս չեն պահանջվում ՊԵԿ-ի կողմից:

P3-11. Ապրանքների եւ ծառայությունների վերաբերյալ հարկ վճարողների հետադարձ կապի ստացում

Այս ցուցանիշի համար գնահատվում են չափման երկու հարթություններ՝ 1) որքանով է հարկային մարմինը հայցում հարկ վճարողների եւ շահագրգիռ այլ կողմերի տեսակետները ծառայությունների մատուցման վերաբերյալ, եւ 2) որքանով են հարկ վճարողների հետադարձ տեղեկությունները հաշվի առնվում վարչական գործընթացների եւ պրոդուկտների նախագծման ժամանակ: Գնահատված գնահատականները ներկայացված են 12-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 12. P3-11 Գնահատում

Չափման հարթությունները	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.		Գնահատական 2025թ.	
P3-11-1. Մատուցվող ծառայությունների ստանդարտի վերաբերյալ հարկ վճարողներից կատարողականի մասին հետադարձ տեղեկություններ ստանալու մեթոդների կիրառումը եւ հաճախականությունը:	M1	A		A	
P3-11-2. Որքանով են հարկ վճարողների կողմից տրամադրված տեղեկությունները հաշվի առնվում վարչական գործընթացների եւ պրոդուկտների նախագծման ժամանակ:		B	B	B	B

Համաշխարհային բանկի հետ համատեղ անցկացվել են հարկ վճարողների ընկալման մի շարք հարցումներ: Հարցումները, որոնք հիմնված են վիճակագրորեն վավեր նմուշների

վրա, անցկացվում են ամեն տարի՝ անկախ կողմի կողմից, ընդգրկելով հարկ վճարողների բոլոր հիմնական հատվածները: Բացի այդ, ՊԵԿ-ը նաեւ սեփական անուսից պարբերաբար հարցումներ է անցկացնում հարկ վճարողների պորտալի միջոցով:

Ոչ մի ապացույց չէր տրամադրվել առ այն, որ խորհրդակցությունները տարածվել են կառավարման նոր մոտեցումների նախագծման կամ փորձարկման վրա: ՊԵԿ-ը գործարկում է Եկամուտների վարչարարության բարեփոխումների հանրային խորհուրդ՝ պետական կառավարման մարմինների, գործարար համայնքի, փորձագետների եւ շահագրգիռ այլ խմբերի ներկայացվածությամբ: Խորհրդի նիստերին վերլուծվում եւ քննարկվում են ՊԵԿ-ի կառավարման եւ գործարար գործընթացների կատարելագործման, ինչպես նաեւ հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների եւ տեղեկությունների վերաբերյալ հարցեր: Այնուամենայնիվ, որեւէ ապացույց չկա, որ նոր գործընթացների կամ պրոդուկտների նախագծման կամ փորձարկման մեջ առկա է հարկ վճարողների եւ միջնորդների ակտիվ ներգրավվածություն, ինչը հաստատել են նաեւ գործարար համայնքի ներկայացուցիչները:

Դ. ԿԱՌ 4. Հարկային հայտարարագրերի ժամանակին ներկայացում

Հարկային հայտարարագրերի ներկայացումը (հայտնի է նաեւ որպես «հարկերի վերադարձեր») շարունակում է լինել հիմնական միջոցը, որով հարկ վճարողի հարկային պարտավորությունը հաստատվում է եւ դառնում է չվճարված և վճարման ենթակա: Սակայն, ինչպես նշված է ԿԱՌ 3-ում, նկատվում է համեմատաբար ոչ բարդ հարկային գործերով հարկ վճարողների հայտարարագրերի պատրաստման եւ ներկայացման հստակեցման միտում (օրինակ՝ հարկային հայտարարագրերի նախնական լրացման միջոցով): Բացի այդ, մի քանի երկրներ սկզբնաղբյուրում պահված եկամտային հարկը դիտարկում են որպես վերջնական հարկ՝ այդպիսով վերացնելով մեծ թվով ԱԵՀ-ի վճարողների տարեկան եկամտային հարկի հայտարարագրեր ներկայացնելու անհրաժեշտությունը: Նկատվում է նաեւ բոլոր հիմնական հարկերի հայտարարագրերի էլեկտրոնային ներկայացման մեծ միտում: Հայտարարագրերը կարող են ներկայացվել հենց հարկ վճարողների կողմից կամ հարկային միջնորդների միջոցով:

Կարելու է, որ բոլոր հարկ վճարողները, որոնցից պահանջվում է հայտարարագիր ներկայացնել, դա անեն, այդ թվում՝ այն հարկ վճարողները, որոնք չեն կարողանում վճարել հարկը հայտարարագրի վճարման պահին (այդ հարկ վճարողների համար հարկային մարմնի համար առաջին առաջնահերթությունը հարկ վճարողից հայտարարություն ստանալն է՝ պարտքի գումարը հաստատելու համար, իսկ այնուհետեւ վճարումն ապահովելը կատարողական եւ այլ միջոցների միջոցով, որոնք նախատեսված են ԿԱՌ 5-ում):

ԿԱՌ 4-ը գնահատելու համար օգտագործվում են կատարողականի երեք ցուցանիշներ.

- P4-12 — Փաստաթղթերը ժամանակին ներկայացնելու ցուցանիշը:
- P4-13 — Փաստաթղթեր չներկայացնողների կառավարումը

- P4-14 — Փաստաթղթերի Էլեկտրոնային ներկայացման միջոցների կիրառումը:

P4-12. Փաստաթղթերը ժամանակին ներկայացնելու ցուցանիշը

ԿԵՀ-ի, ԱԵՀ-ի, ԱԱՀ-ի, ներքին ակցիզային հարկի ու ՀՎԱ-ի պահման վերաբերյալ հայտարարագրերը գնահատելու համար օգտագործվում է մեկ կատարողականի ցուցանիշ՝ չորս չափման հարթություններով: Ժամանակին ներկայացնելու բարձր ցուցանիշը վկայում է համապատասխանության արդյունավետ կառավարման մասին, այդ թվում, օրինակ, հայտարարագրեր ներկայացնելու հարմարավետ միջոցների տրամադրումը (հատկապես Էլեկտրոնային ներկայացման միջոցներ), պարզեցված հայտարարագրերի ձևերը եւ կատարողական գործողություններն այն անձանց նկատմամբ, ովքեր ժամանակին չեն ներկայացնում հայտարարագրերը: Գնահատված գնահատականները ներկայացված են 13-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 13. P4-12 Փնահատում

Չափման հարթությունները	Փնահատման մեթոդը	Փնահատական 2016թ.		Փնահատական 2025թ.	
P4-12-1. Օրենքով սահմանված ժամկետում ներկայացված ԿԵՀ-ի հայտարարագրերի թիվը՝ ներկայացված գրանցված ԿԵՀ վճարողներից ակնկալվող հայտարարագրերի թվի տոկոսով:	M2	D	D	B	B+
P4-12-2. Օրենքով սահմանված ժամկետում ներկայացված ԱԵՀ-ի հայտարարագրերի թիվը՝ ներկայացված գրանցված ԱԵՀ վճարողներից ակնկալվող հայտարարագրերի թվի տոկոսով:		D		B	
P4-12-3. Օրենքով սահմանված ժամկետում ներկայացված ԱԱՀ-ի հայտարարագրերի թիվը՝ ներկայացված գրանցված ԱԱՀ վճարողներից ակնկալվող հայտարարագրերի թվի տոկոսով:		D		B	
P4-12-4. Օրենքով սահմանված ժամկետում ներկայացված ներքին ակցիզային հարկի հայտարարագրերի թիվը՝ ներկայացված գրանցված ներքին ակցիզային հարկ վճարողներից ակնկալվող հայտարարագրերի թվի տոկոսով:		-		B	
P4-12-5. Օրենքով սահմանված ժամկետում գործատուների կողմից ներկայացված ՀՎԱ-ի պահումների հայտարարագրերի թիվը՝ ներկայացված գրանցված գործատուներից ակնկալվող ՀՎԱ հայտարարագրերի թվի տոկոսով:		D		A	

Ժամանակին ներկայացնելու ցուցանիշները բարձր են բոլոր հիմնական հարկերի դեպքում, սակայն խոշոր հարկ վճարողների կողմից ժամանակին ներկայացնելու ցուցանիշը ցածր է միջազգային լավ գործելակերպից: III հավելվածի 4-10-րդ

աղյուսակներում ցույց է տրված, որ խոշոր հարկ վճարողների կողմից ժամանակին ներկայացնելու ցուցանիշները տատանվում են ԿԵՀ-ի և ԱԱՀ-ի համար 99. 5 տոկոսից մինչև ակցիզային հարկի համար 97. 2 տոկոս:¹² ՀՎԱ վերադարձերի ժամանակին ներկայացման ցուցանիշը 99. 7 տոկոս է:¹³

P4-13. Փաստաթղթերը չներկայացնողների կառավարումը

Այս ցուցանիշը չափում է, թե որքանով են հարկ վճարողները, որոնք չեն ներկայացրել հայտարարագրեր, պատշաճ կառավարվում: Փնտհատված գնահատականը ներկայացված է 14-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 14. P4-13 Գնահատում

Չափման հարթությունը	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.	Գնահատական 2025թ.
P4-13. Փաստաթղթերը չներկայացնողների մասով ձեռնարկված հետագա գործողությունները:	M1	-	B

Գործում են փաստաթղթերը չներկայացնողների կառավարման արդյունավետ գործընթացներ, թեև որոշ հիբրիդային գործընթացներ կարող են հանգեցնել նրան, որ հետագա գործողությունները տևեն մեկ շաբաթից ավելի: Փաստաթղթերը ժամանակին չներկայացրած հարկ վճարողներին հայտնաբերելու համար կիրառվում են ավտոմատացված գործընթացներ: ԱԵԿ-ի հայտարարագրերն ուշ ներկայացնողների նկատմամբ կիրառվող տուգանքները կառավարվում են հիբրիդային ընթացակարգի միջոցով, որը համակցում է ավտոմատացված ներքին ծանուցումները ձեռքով իրականացվող գործընթացների հետ: Այս մոտեցումն ապահովում է, որ անհատների նկատմամբ տուգանք կիրառելու մասին որոշումները կայացվեն մարդու կողմից՝ ընդունելով այդ հարցերում զգայունության անհրաժեշտությունը: Հայտարարագրեր չներկայացնողների ցուցակը տրամադրվում է համապատասխան վարչություններին, որոնք պատասխանատու են հարկ վճարողների պահանջների համապատասխանության վերահսկման համար:

¹² Միջազգային լավ գործելակերպը հիմնական բոլոր հարկերի համար խոշոր հարկ վճարողների կողմից ժամանակին ներկայացնելու ցուցանիշը 100 տոկոս է:

¹³ Հավելված III, Աղյուսակ 10: Միջազգային լավ գործելակերպի մակարդակը ՀՎԱ-ի ժամանակին ներկայացման համար՝ 90 տոկոս և ավելի ժամանակին ներկայացում:

P4-14. Փաստաթղթերի էլեկտրոնային ներկայացման միջոցների կիրառումը

Այս ցուցանիշը չափում է, թե որքանով են հարկերի բոլոր հիմնական տեսակների հայտարարագրերը ներկայացվում էլեկտրոնային եղանակով: Գնահատված գնահատականները ներկայացված են 15-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 15. P4-14 Գնահատում

Չափման հարթությունը	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.	Գնահատական 2025թ.
P4-14. Որքանով են հարկային հայտարարագրերը ներկայացվում էլեկտրոնային եղանակով:	M1	A	A

Հայտարարագրերի էլեկտրոնային ներկայացումը պարտադիր է բոլոր հիմնական հարկերի համար: 2018 թվականից սկսած՝ հարկ վճարողների համար պարտադիր է բոլոր հարկային հայտարարագրերը ներկայացնել էլեկտրոնային եղանակով:

Ե. ԿԱՌ 5. Հարկերի ժամանակին վճարում

Հարկ վճարողներից ակնկալվում է հարկերը վճարել ժամանակին: Հարկային օրենսդրության մեջ եւ վարչական ընթացակարգերում սահմանվում են վճարման պահանջները, այդ թվում՝ վճարման վերջնաժամկետները (ժամկետները), ումից է պահանջվում վճարումը կատարել եւ վճարման եղանակները: Կախված գործող համակարգից՝ վճարումները կա՛մ ինքնուրույն կգնահատվեն, կա՛մ կգնահատվեն վարչական կարգով: Հարկ վճարողի կողմից ժամանակին չվճարելը հանգեցնում է տուկոսների եւ տուգանքների կիրառման, իսկ որոշ հարկ վճարողների համար՝ պարտքերի վերականգնման իրավական հայցի: Հարկային վարչարարության նպատակը պետք է լինի կամավոր ժամանակին վճարման բարձր ցուցանիշների եւ հարկային ապառքների դեպքերի ցածր մակարդակի հասնելը:

ԿԱՌ 5-ը գնահատելու համար օգտագործվում են կատարողականի չորս ցուցանիշներ.

- P5-15 — էլեկտրոնային վճարման միջոցների կիրառումը:
- P5-16 — Հավաքագրման արդյունավետ համակարգերի կիրառումը:
- P5-17 — Վճարումների ժամանակին լինելը
- P5-18 — Հարկային ապառքների պաշարը եւ հոսքը:

P5-15. էլեկտրոնային վճարման միջոցների կիրառումը

Այս ցուցանիշով ուսումնասիրվում է, թե որքանով են հիմնական հարկերը վճարվում

Էլեկտրոնային եղանակով՝ առանց բանկի աշխատակիցների կամ հարկային մարմնի անմիջական միջամտության, այդ թվում՝ Էլեկտրոնային դրամական միջոցների փոխանցման միջոցով (երբ գումարը հարկ վճարողի բանկային հաշվից համացանցի միջոցով փոխանցվում է Կառավարության հաշվին), կրեդիտային քարտերի եւ դեբետային քարտերի միջոցով: Գնահատված գնահատականները ներկայացված են 16-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 16. P5-15 Գնահատում

Չափման հարթությունը	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.	Գնահատական 2025թ.
P5-15. Որքանով են հիմնական հարկերը վճարվում Էլեկտրոնային եղանակով:	M1	A	A

Բոլոր վճարումները կատարվում են Էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային վճարումները կազմում են վճարումների թվի եւ հիմնական հարկերի հավաքագրման արժեքի 100 տոկոսը: Բոլոր հարկ վճարողների համար բոլոր հարկային վճարումները կատարվում են Պետական վճարումների Էլեկտրոնային համակարգի միջոցով՝ ՊԵԿ պորտալի միջոցով: Հավաքագրված եկամուտներն Էլեկտրոնային եղանակով փոխանցվում են ՀՀ կենտրոնական բանկի համախմբված ՊԵԿ միասնական հաշվին:

P5-16. Հավաքագրման արդյունավետ համակարգերի կիրառումը

Այս ցուցանիշը գնահատում է, թե որքանով են օգտագործվում ճանաչված արդյունավետ հավաքագրման համակարգերը, հատկապես՝ պահումը սկզբնաղբյուրում եւ կանխավճարային համակարգերը: Գնահատված գնահատականները ներկայացված են 17-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 17. P5-16 Գնահատում

Չափման հարթությունը	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.	Գնահատական 2025թ.
P5-16. Որքանով են օգտագործվում սկզբնաղբյուրի եւ կանխավճարային վճարման համակարգերը:	M1	A	A

Արդյունավետ հավաքագրման համար զգալի չափով օգտագործվում են պահումները եւ կանխավճարները: Աշխատանքի բոլոր եկամուտները ենթակա են պահման: Անհատ ձեռնարկատերերից կամ անհատ առեւտրականներից, որոնք հարկվում են անձնական եկամտային հարկով, պահանջվում է կատարել եռամսյակային կանխավճարային մասնակի

վճարումներ՝ նախորդ տարվա եկամտի հիման վրա: Եռամսյակային կանխավճարային մասնակի վճարումներ են պահանջվում նաեւ ԿԵՀ պարտավորությունների համար: Տոկոսային կամ շահաբաժնային եկամուտ վճարող հաստատություններից նույնպես պահանջվում է պահել տոկոսադրույքների կամ շահաբաժինների եկամտի նկատմամբ հարկ:

P5-17. Վճարումների ժամանակին լինելը

Այս ցուցանիշը գնահատում է, թե որքանով են վճարումները կատարվում ժամանակին (ըստ թվի եւ արժեքի): ՀԱԱԳԳ-ի գնահատման նպատակներով՝ ԱԱՀ-ի վճարման կատարողականն օգտագործվում է որպես հիմնական հարկերի ժամանակին վճարման փոխարինող: Ժամանակին վճարման բարձր ցուցանիշը վկայում է համապատասխանության հուսալի կառավարման մասին, այդ թվում, օրինակ, հարմարավետ վճարման մեթոդների ապահովումը եւ ժամկետանց գումարների մասով արդյունավետ հետագա քայլերը: Գնահատված գնահատականները ներկայացված են 18-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 18. P5-17 Գնահատում

Չափման հարթությունները	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.		Գնահատական 2025թ.	
P5-17-1. Օրենքով սահմանված ժամկետում կատարված ԱԱՀ-ի վճարումների թիվը՝ արտահայտված կատարման ենթակա վճարումների ընդհանուր թվի տոկոսով:	M1	D	D	B	D
P5-17-2. Օրենքով սահմանված ժամկետում կատարված ԱԱՀ-ի վճարումների գումարը՝ արտահայտված կատարման ենթակա վճարումների ընդհանուր գումարի տոկոսով:		D		D	

Խոշոր ԱԱՀ վճարողների կողմից ժամանակին կատարված վճարումների արժեքն ավելի ցածր է, քան միջազգային լավ գործելակերպի դեպքում:¹⁴ ԱԱՀ խոշոր վճարողների համար ըստ թվի ԱԱՀ-ի վճարումների 92.1 տոկոսն է և ըստ արժեքի 86. 6 տոկոսն է վճարվել ժամանակին: ԱԱՀ ընդհանուր վճարումների համեմատությամբ՝ ըստ թվի 94.8 տոկոսն է և ըստ արժեքի 84. 2 տոկոսն է վճարվել ժամանակին: Ամենավատ կատարողականը խոշոր հարկ վճարողների կողմից ժամանակին վճարված ԱԱՀ-ի արժեքն էր:

¹⁴ Միջազգային լավ գործելակերպն է, որ խոշոր հարկ վճարողների կողմից ԱԱՀ-ի վճարումների 100 տոկոսը (ըստ թվի եւ արժեքի) վճարվում է ժամանակին, և որ ընդհանուր ԱԱՀ-ի վճարումների 90 տոկոսը (ըստ թվի եւ արժեքի) վճարվում է ժամանակին:

P5-18. Հարկային ապառքների պաշարը եւ հոսքը

Այս ցուցանիշն ուսումնասիրում է կուտակված հարկային ապառքների չափը:

Հարկային մարմնի կողմից հարկային ապառքների գույքագրման չափը գնահատելու համար օգտագործվում են երկու չափման հարթություններ՝ 1) վերջին տարվա հարկային պարտքերի հարաբերակցությունը տարեկան հարկերի հավաքագրման հայտարարի հետ, եւ 2) տարվա վերջին «հավաքագրվող հարկային ապառքների» առավել կատարելագործված հարաբերակցությունը տարեկան հավաքագրման ցուցանիշի հետ: Երրորդ չափման հարթությունը դիտարկում է չվճարված հարկային այն պարտավորությունների չափը, որոնք ավելի քան մեկ տարի ուշացվել են (բարձր տոկոսը կարող է ցույց տալ պարտքերի հավաքման վատ գործելակերպ եւ կատարողական, քանի որ հարկային ապառքների վերականգնման տեմպը հակված է նվազել ապառքների ժամկետներն ավելի մեծանալուն զուգընթաց): Գնահատված գնահատականները ներկայացված են 19-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 19. P5-18 Գնահատում

Չափման հարթությունները	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.		Գնահատական 2025թ.	
P5-18-1. Հարկաբյուջետային տարվա ավարտին հիմնական հարկային ապառքների ընդհանուր հավաքագրումները՝ արտահայտված որպես հարկաբյուջետային տարվա ընդհանուր հիմնական հարկային եկամտի հավաքագրման տոկոս:	M2	B		B	
P5-18-2. Հարկաբյուջետային տարվա ավարտին հիմնական հարկային ապառքների գանձման ենթակա հավաքագրումները՝ արտահայտված որպես հարկաբյուջետային տարվա ընդհանուր հիմնական հարկային եկամտի հավաքագրման տոկոս:		D	D+	A	B
P5-18-3. Հիմնական հարկային ապառքների արժեքն ավելի քան 12 ամսվա է՝ արտահայտված որպես բոլոր հիմնական հարկային ապառքների արժեքի տոկոս:		D		D	

Թեև ընթացիկ տարվա հարկային ապառքներն ընթացիկ հավաքագրումների 15 տոկոսից քիչ են, չհավաքված հարկային պարտքերի ավելի քան 95 տոկոսն ավելի քան 12 ամսվա է: Հիմնական հարկերի ապառքների հիմնական հարկերի հավաքագրումների համեմատության երեք տարվա միջինը կազմել է 14. 2 տոկոս: Հարկման ենթակա հարկերի՝ որպես հիմնական հարկերի հավաքագրումների մասնաբաժին երեք տարվա միջինը կազմել է 3. 7 տոկոս: Ավելի քան 12 ամսվա հիմնական հարկային ապառքների երեք տարվա արժեքը, որպես բոլոր հիմնական հարկային ապառքների տոկոս, կազմում էր ավելի քան 95 տոկոս: Իշխանությունները տեղեկացրել են, որ թեև ունեն մի շարք օրենսդրական լիազորություններ՝ ժամանակին չվճարված հարկերը հավաքելու համար, այդ գործընթացները կատարվելու համար կարող է պահանջվել ավելի քան 12 ամիս, ենթադրաբար՝ օրենսդրության մեջ տրամադրվող ժամկետների արդյունքում:

2. ԿԱՌ 6. Հայտարարագրերում ճշգրիտ հաշվետվությունների ներկայացում

Հարկային համակարգերը մեծապես հիմնված են հարկ վճարողների կողմից հարկային հայտարարագրերում տեղեկությունների ամբողջական եւ ճշգրիտ հաշվետվություններից: Ուստի հարկային մարմինները պետք է կանոնավոր կերպով վերահսկեն ոչ ճշգրիտ հաշվետվությունների արդյունքում հարկային եկամուտների կորուստները, հատկապես՝ ձեռնարկություն հարկ վճարողների կողմից, եւ մի շարք գործողություններ ձեռնարկեն՝ համապատասխանությունն ապահովելու համար: Այս գործողությունները բաժանվում են երկու լայն խմբի՝ ստուգման գործողություններ (օրինակ՝ հարկային աուդիտներ, քննություններ եւ եկամուտների համապատասխանեցում երրորդ կողմի տեղեկատվական աղբյուրների հետ) եւ պրոակտիվ նախաձեռնություններ (օրինակ՝ հարկ վճարողների աջակցություն եւ ուսուցում ինչպես ընդգրկված է ԿԱՌ 3-ում, եւ համագործակցային համապատասխանության մոտեցումներ):

Լավ նախագծված և կառավարվող լինելու դեպքում հարկային աուդիտի ծրագրերը կարող են շատ ավելի մեծ ազդեցություն ունենալ, քան պարզապես լրացուցիչ եկամուտ ստանալը հարկային աուդիտների արդյունքում հայտնաբերված անհամապատասխանություններից: Լուրջ իրավախախտումներ կատարողներին հայտնաբերելը եւ պատժելը ծառայում է բոլոր հարկ վճարողներին ոչ ճշգրիտ հաշվետվություն ներկայացնելու հետեւանքների մասին հիշեցնելու համար:

Ժամանակակից հարկային վարչարարությունում աչքի է ընկնում նաեւ հարկային հայտարարագրերում հաշվետվություն ներկայացված գումարների լայնածավալ ավտոմատացված խաչաձեւ ստուգումը երրորդ կողմի տեղեկությունների հետ: Աուդիտի ավանդական մեթոդների հետ կապված բարձր ծախսերի եւ համեմատաբար ցածր ծածկույթի պատճառով հարկային մարմինները գնալով ավելի ու ավելի են օգտագործում տեխնոլոգիաները՝ մեծ թվով հարկ վճարողների գրանցումները ստուգելու համար՝ անհամապատասխանությունները հայտնաբերելու եւ ճշգրիտ հաշվետվություններ ներկայացնելը խրախուսելու համար:

Պրոակտիվ նախաձեռնությունները կարելու դեր են խաղում նաեւ ոչ ճշգրիտ

հաշվետվությունների միակերպ վերացման գործում: Դրանք ներառում են համապատասխանության համագործակցային մոտեցումների ընդունում հարկ վճարողների (հատկապես՝ խոշոր հարկ վճարողների) եւ միջնորդների հետ համագործակցային եւ վստահության վրա հիմնված հարաբերություններ կառուցելու համար՝ հարկային խնդիրները լուծելու եւ ընկերությունների հարկային դիրքորոշումներին որոշակիություն բերելու համար հարկային հայտարարագրի ներկայացումից առաջ կամ գործարքի փաստացի կնքումից առաջ: Այստեղ կարելու դեր կարող է խաղալ պարտադիր հարկային որոշումների համակարգը:

Վերջապես, հարկ վճարող բնակչության շրջանում ոչ ճշգրիտ հաշվետվությունների

ծավալի մոնիթորինգի հարցում օգտագործվում են տարբեր մոտեցումներ, այդ թվում՝ հարկային համապատասխանության բացի գնահատման մոդելների օգտագործումն ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի հարկերի համար, առաջադեմ վերլուծություն՝ օգտագործելով տվյալների խոշոր խմբեր (օրինակ՝ կանխատեսող մոդելներ, կլաստերացման տեխնիկաներ եւ գնահատման մոդելներ)՝ հարկ վճարողների կողմից եկամտի լիարժեք եւ ճշգրիտ բացահայտման հավանականությունը որոշելու համար, եւ հարցումներ՝ եկամուտների ճշգրիտ հաշվետվության նկատմամբ հարկ վճարողների վերաբերմունքը դիտանցելու համար:

Ի հակադրություն դրա, ԿԱՌ 6-ը գնահատելու համար օգտագործվում են կատարողականի չորս ցուցանիշներ.

- P6-19 — Ստուգման գործողությունների շրջանակը, որոնք ձեռնարկվել են ոչ ճշգրիտ հաշվետվությունները հայտնաբերելու եւ կանխելու համար:
- P6-20 — Տվյալների համապատասխանեցման լայնածավալ համակարգերի օգտագործում ոչ ճշգրիտ հաշվետվությունները հայտնաբերելու համար:
- P6-21 — Ճշգրիտ հաշվետվությունների խրախուսման նպատակով ձեռնարկված նախաձեռնություններ:
- P6-22 — Հարկային բացի մոնիթորինգ՝ հաշվետվության մակարդակների անճշտությունը գնահատելու համար:

P6-19. Ստուգման գործողությունների շրջանակը, որոնք ձեռնարկվել են ոչ ճշգրիտ հաշվետվությունները հայտնաբերելու եւ կանխելու համար

Այս ցուցանիշի համար չորս չափման հարթությունները ներկայացնում են հարկային մարմնի ստուգման ծրագրի բնույթի եւ ծավալի վերաբերալ նշում:

Գնահատված գնահատականները ներկայացված են 20-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 20. P6-19 գնահատում

Չափման հարթությունները	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.		Գնահատական 2025թ.	
P6-19-1. Հարկային աուդիտի գործող ծրագրի բնույթը եւ շրջանակը՝ ոչ ճշգրիտ հաշվետվությունները հայտնաբերելու եւ կանխելու համար:	M1	B		D	
P6-19-2. Որքանով է հարկային աուդիտի ծրագիրը համակարգված միատեսակ գործելակերպերի շուրջ:		-	B	D	D
P6-19-3. Որքանով է դիտանցվում հարկ վճարողների աուդիտների որակը:		-		D	
P6-19-4. Որքանով է հարկային մարմինը դիտանցում հարկ վճարողի աուդիտի գործառնության արդյունավետությունը:		-		D	

Հարկային աուդիտի ծրագրով բավարար թվով գործեր չեն ընտրվում գնահատված ռիսկերի հիման վրա : ՊԵԿ-ի կողմից իրականացվող աուդիտների շուրջ 50 տոկոսն ընտրված է ոստիկանության կամ այլ գերատեսչությունների ուղղորդումներով կամ ձեռնարկության անվճարունակության դեպքերում համալիր աուդիտներ անցկացնելու մասին պարտադիր օրենսդրական պահանջներով: Սա կարող է լինել գործելակերպի փոփոխություն 2016 թվականի ՀՎԱԳԳ-ի գնահատումից հետո կամ ակնհայտ չի եղել այդ գնահատման թիմի համար: Սա հիմնական գործոնն է, որը հանգեցնում է այս գնահատման մեջ P6-19-ի ավելի ցածր գնահատականի:

Աուդիտի ծրագիրը համակարգված չէ միատեսակ գործելակերպի շուրջ, օրինակ՝ լավ մշակված աուդիտի ուղեցույցների օգտագործմամբ: ԱԱՀ-ի աուդիտի ուղեցույցում հիմնականում մանրամասն նկարագրվում են մեկնաբանական հարցեր, այն պարբերաբար չի թարմացվում եւ էականորեն չի նպաստում վարչական աուդիտի միատեսակ գործելակերպին:

Հարկ վճարողների աուդիտների որակի ապահովման էական վերանայում չկա: Համալիր հարկային ստուգումների վարչության կողմից իրականացվող ուսումնասիրությունները վերաբերում են նրան, թե արդյոք աուդիտորները հաշվի են առել վերհանված ռիսկերից յուրաքանչյուրը, այլ ոչ թե աուդիտի որակը:

ՊԵԿ-ը չի դիտանցում եւ չի գնահատում հարկ վճարողների աուդիտի գործառույթի արդյունավետությունը: Կատարվում է աուդիտի ծրագրի ելքային տվյալների կատարողականի ամենամսյա եւ եռամսյակային վերլուծություն, ինչպիսիք են իրականացված աուդիտների քանակը, գնահատված հարկերի արժեքը, որոնք վերլուծվում են տարբեր հարկերի տեսակների եւ ոլորտների դեպքում, համեմատվում են նախորդ եռամսյակների հետ, եւ այլ ելքային վիճակագրական տվյալներ: Այնուամենայնիվ, չկան ապացույցներ կամ հաշվետվություններ համապատասխանության ավելի լայն միտումների, արդյունավետ այցերի ցուցանիշի համեմատական վերլուծությունների, աուդիտի տարբեր տեսակների իրականացման ժամկետների, ներդրումների եկամտաբերության, հավաքման արժեքի, աուդիտի միջին վերադարձի, վեճերի առաջացման ցուցանիշի, կրկնվելու ցուցանիշների կամ ավելի մեծ եկամտի ազդեցությունների վերաբերյալ:

P6-20. Տվյալների համապատասխանեցման լայնածավալ համակարգերի օգտագործում՝ ոչ ճշգրիտ հաշվետվությունները հայտնաբերելու համար:

Այս ցուցանիշի համար չափման հարաչափերից մեկը ներկայացնում է նշում, թե որքանով է հարկային մարմինն օգտագործում տեխնոլոգիան՝ մեծ թվով հարկ վճարողների գրառումները երրորդ կողմի տեղեկությունների համեմատությամբ ստուգելու համար՝ անհամապատասխանությունները հայտնաբերելու եւ ճիշտ հաշվետվություններ ներկայացնելը խրախուսելու համար: Գնահատված գնահատականները ներկայացված են 21-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 21. P6-20 Գնահատում

Չափման հարթությունը	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.	Գնահատական 2025թ.
P6-20. Հարկային հայտարարագրերում ներկայացված տեղեկությունների ստուգման նպատակով մեծածավալ ավտոմատացված խաչաձեւ ստուգման ծավալները:	M1	D	C

ՊԵԿ-ը չունի բավարար հասանելիություն բանկային տեղեկություններին՝ հարկային հայտարարագրերում ներկայացված տեղեկությունների հետ լայնածավալ ավտոմատացված խաչաձեւ ստուգում իրականացնելու հնարավորություն տալու համար: ՊԵԿ-ն ունի հասանելիություն ԱԱՀ-ի հայտարարագրերում և գործատուների կողմից ներկայացված տեղեկություններին: ՊԵԿ-ը նաև հասանելիություն ունի պետական այլ գերատեսչությունների, այդ թվում՝ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի, գույքի պետական կադաստրի տեղեկություններին և մաքսային տվյալներին (ներքին կարգով) :

P6-21. Ճշգրիտ հաշվետվությունների խրախուսման նպատակով ձեռնարկված նախաձեռնություններ

Այս ցուցանիշը գնահատում է համագործակցային համապատասխանության և ճշգրիտ հաշվետվությունների խրախուսման նպատակով ձեռնարկված այլ պրոակտիվ նախաձեռնությունների բնույթն ու շրջանակը: Գնահատված գնահատականները ներկայացված են 22-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 22. P6-21 Գնահատում

Չափման հարթությունը	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.	Գնահատական 2025թ.
P6-21. Ճշգրիտ հաշվետվությունների խրախուսման նպատակով ձեռնարկված պրոակտիվ նախաձեռնությունների բնույթն ու շրջանակը:	M1	C	C

Հարկային օրենսգրքով ՖՆ-ին թույլատրվում է տրամադրել պաշտոնական պարզաբանումներ (հրապարակային որոշումներ): Դրանք տրամադրվում են ՖՆ-ի կողմից և հրապարակվում են ՊԵԿ-ի կայքում և Հայաստանի իրավական ակտերի հրապարակման կայքում մեծապես կենտրոնական լիցենզիայի կողմից բարձրացված ընդհանուր մեկնաբանական հարցերի վրա: Փաստերը ցույց են տալիս, որ 2021 թվականից ի վեր 3 այդպիսի պարզաբանումներ են տրվել: ՖՆ-ը տեղեկանք է տրամադրել այդ պարզաբանումների պարտադիր բնույթի մասին, որը փոքր-ինչ երկիմաստ էր, սակայն կարծես թե հաստատում էր, որ դրանք պարտադիր են ՊԵԿ-ի համար, սակայն միևնույն ժամանակ՝ ոչ պարտադիր հարկ վճարողների համար: ՊԵԿ-ն արձագանքում է հարկ վճարողների հարցումներին, սակայն պատասխանները պարտադիր մասնավոր որոշումների համակարգ չեն՝ ինչպես նախատեսված է միջազգային լավ գործելակերպում: Օրինակ, չկա որեւէ գործընթաց, որը սահմանում է այն տվյալները, որոնք հարկ վճարողը պետք է տրամադրի պարտադիր որոշում ստանալու համար, չկա քննարկման պաշտոնական գործընթաց, հարկ վճարողին արդյունքի մասին ծանուցելու պաշտոնական գործընթաց կամ պայմաններ, որոնցով ՊԵԿ-ն իրեն պարտավորված կհամարի որոշմամբ (կամ ոչ):

Չկան համագործակցային համապատասխանության

պայմանավորվածություններ:¹⁵ Հարկային օրենսգրքով նախատեսվում է գործընթաց,

¹⁵ Տե՛ս սահմանումը ՀՎԱԳԳ-ի ուղեցույցում:

որի շրջանակներում ցածր ռիսկային, պահանջները կատարող հարկ վճարողները («օրինապահ հարկ վճարողներ») կարող են տարեկան կտրվածքով դիմել հավաստագիր ստանալու համար: Այս հավաստագիրը վավեր է մեկ տարի ժամկետով եւ ապահովում է բազմաթիվ առավելություններ, օրինակ՝ ԱԱՀ-ի վերադարձի եւ վեճերի ավելի արագ մշակում: Այն նաեւ մաքսային մարմինների կողմից որպես լիազորված տնտեսվարող հավատարմագրման պահանջ է:

P6-22. Հարկային ճեղքվածքի մոնիթորինգ՝ հաշվետվության մակարդակների անճշտությունը գնահատելու համար

Այս ցուցանիշն ուսումնասիրում է հարկային մարմնի կողմից հայտարարագրերում ոչ ճշգրիտ հաշվետվությունների ծավալը դիտանցելու համար կիրառվող մեթոդների հուսալիությունը: Գնահատված գնահատականը ներկայացված է 23-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 23. P6-22 Գնահատում

Չափման հարթությունները	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.	Գնահատական 2025թ.
P6-22. Հարկային մարմնի կողմից ոչ ճշգրիտ հաշվետվությունների ծավալը դիտանցելու համար կիրառվող՝ հարկային ճեղքվածքների վերլուծության մեթոդի/ների հուսալիությունը:	M1	C	A

ՊԵԿ-ն ունի հարկային ճեղքվածքների ուսումնասիրություններ անցկացնելու ակտիվ եւ շարունակական ծրագիր: Դա ներառում է օրինակ ԱԱՀ ճեղքվածքի 2022 թվականի գնահատումը, ԿԵՀ-ի ճեղքվածքի՝ 2020-2022 թվականներն ընդգրկող գնահատում, ԿԵՀ-ի ճեղքվածքի 2023 թվականի կանխատեսում և ԱԵՀ-ի ճեղքվածքի և սոցիալական ապահովության ճեղքի գնահատումները, որոնք անց են կացվել 2025 թվականին, որոնք բոլորն էլ հրապարակվել են: Արժանահավատությունն ապահովվում է ճեղքվածքների գնահատման գործընթացում այնպիսի կազմակերպություններից փորձագիտական անձնակազմի ներգրավման միջոցով, ինչպիսին է ԱՄՀ-ը :

Հարկային ճեղքվածքների գնահատման արդյունքներն ակտիվորեն օգտագործվում են որպես ռիսկերի կառավարման ավելի լայն գործընթացի մաս: Ռիսկի հարաչափերը ճշգրտվում են՝ արտացոլելով ճեղքվածքների վերլուծության մեջ վերհանված առաջնահերթ ոլորտները, ինչն էլ իր հերթին հանգեցնում է աուդիտի՝ այդ ոլորտների ավելի բարձր ներառման (ինչպես նախատեսված է նաեւ Հարկային օրենսգրքի 336-րդ հոդվածում): Բացի այդ, համապատասխանության բարելավման պլաններ են

պարբերաբար մշակվում ճեղքվածքների գնահատումների մեջ վերհանված առավել բարձր ռիսկային ոլորտների համար: Ընդհանուր առմամբ, ՊԵԿ-ի գործելակերպերը համահունչ են հարկային ճեղքվածքների դիտանցման մասով միջազգային լավ գործելակերպին:

Է. ԿԱՌ 7. Հարկային վեճերի արդյունավետ լուծում

Այս ԿԱՌ-ն վերաբերում է այն գործընթացին, որով հարկ վճարողը հայցում է անկախ ուսումնասիրություն՝ աուդիտի արդյունքում առաջացած հարկային գնահատման փաստերի կամ օրենքի մեկնաբանության հիման վրա: Իսկ որ ամենակարելու է, հարկային վեճերի գործընթացը պետք է երաշխավորի հարկ վճարողի՝ հարկային գնահատումը վիճարկելու եւ արդար լուծ ստանալու իրավունքը: Գործընթացը պետք է հիմնված լինի իրավական դաշտի վրա, հայտնի եւ հասկանալի լինի հարկ վճարողներին, լինի հեշտ հասանելի, երաշխավորի թափանցիկ անկախ որոշումների կայացում եւ ժամանակին լուծի վիճարկվող հարցերը:

ԿԱՌ 7-ը գնահատելու համար օգտագործվում են կատարողականի երեք ցուցանիշներ.

- P7-23 — Վեճերի լուծման անկախ, գործուն եւ աստիճանական գործընթացի առկայություն:
- P7-24 — Վեճերը լուծելու համար պահանջվող ժամանակը:
- P7-25 — Վեճերի ելքերի արդյունքում կատարվող գործողության աստիճանը:

P7-23. Լուծման անկախ, գործուն եւ աստիճանական գործընթացի առկայություն

Այս ցուցանիշի համար գնահատվում են չափման երեք հարթություններ՝ 1) որքանով վեճը կարող է փոխանցվել անկախ արտաքին տրիբունալի կամ դատարանի, երբ հարկ վճարողը դժգոհ է հարկային մարմնի ուսումնասիրության գործընթացի արդյունքից, 2) որքանով է հարկային մարմնի ուսումնասիրության գործընթացն իսկապես անկախ, եւ 3) որքանով են հարկ վճարողները տեղեկացված իրենց իրավունքների եւ վերանայման ուղիների մասին: Գնահատված գնահատականները ներկայացված են 24-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 24. P7-23 Քնահատում

Չափման հարթությունները	Քնահատման մեթոդը	Քնահատական 2016թ.		Քնահատական 2025թ.	
P7-23-1. Որքանով է հարկ վճարողներին հասանելի եւ նրանց կողմից կիրառվում վարչական եւ դատական վերանայման պատշաճ աստիճանական մեխանիզմ:	M2	B		A	
P7-23-2. Արդյոք վարչական վերանայման մեխանիզմն անկախ է աուդիտի գործընթացից:		B	B	B	B+
P7-23-3. Արդյոք վեճի քննության գործընթացի մասին տեղեկությունները հրապարակվում են, եւ արդյոք հարկ վճարողները հստակորեն տեղեկացվում են դրա մասին:		B		B	

Վեճերի լուծման գործընթացը հետեւում է եռաստիճան մոտեցմանը: Առաջինը վարչական բողոքարկման մեկ գործընթաց է՝ կա՛մ ՊԵԿ-ի ներքին Բողոքարկման հանձնաժողովին,¹⁶ կա՛մ բողոքարկում անմիջապես վարչական դատարան:¹⁷ Եթե հարկ վճարողը դժգոհ է Բողոքարկման հանձնաժողովի որոշումից, ապա հարկ վճարողն օրինական իրավունք ունի բողոքարկելու մասնագիտացված վարչական դատարան: Եթե հարկ վճարողի բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժվում է, ապա նա կարող է բողոքարկել վերադաս դատարան, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության վերաքննիչ դատարան: ՊԵԿ-ի կողմից 2024 թվականի վերաբերյալ տրամադրված տվյալները վկայում են, որ կիրառվում է վեճերի լուծման գործընթաց :

Բողոքարկման հանձնաժողովը ֆիզիկապես անկախ է աուդիտի գործընթացից, սակայն առկա են կապեր կան աուդիտի գործառույթի եւ վեճերի լուծման գործառույթի միջեւ:

Բողոքարկման հանձնաժողովը ՊԵԿ-ի կազմում է գործում եւ կազմված է ՊԵԿ-ի նախագահից եւ ութ այլ անդամներից՝ ինչպես սահմանված է ընթացակարգերով: Անդամներն ընտրված են ՊԵԿ-ի տարբեր ստորաբաժանումներից, այդ թվում՝ Հարկային վարչարարության կազմակերպման, դիտարկման և հսկողության վարչության եւ Հարկ վճարողների ընթացիկ հսկողության տեսչություն-վարչության

¹⁶ 2024 թվականի մայիսից մինչեւ 2025 թվականի ապրիլն ընկած ժամանակահատվածում Բողոքարկման հանձնաժողով է ներկայացվել 2,179 հայտ:

¹⁷ 2024 օրացուցային տարում 1,563 վեճ է ներկայացվել անմիջապես վարչական դատարան:

պետերից: Աուդիտի անդամները հրաժարվում են որոշումներ կայացնելուց, երբ քննարկվում են իրենց վարչության աուդիտի գործերը: Բողոքարկման հանձնաժողովի աշխատանքներին աջակցում է Վերաքննիչ հանձնաժողովի գործառնությունների կառավարման բաժինը: Սա Հարկային վարչարարության կազմակերպման, դիտարկման և հսկողության վարչության մասն է, որը պատասխանատու է նաեւ Համալիր հարկային ստուգումների վարչության համար: Արդյունքում, աուդիտի գործառնությունները և վեճերի լուծման գործընթացին աջակցող գործառնություններն ընկնում են մեկ ղեկավարի հսկողության ներքո:

ՊԵԿ-ի կայքում առկա են հարկ վճարողների՝ վեճերի մասով իրավունքների և գործընթացների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ, սակայն չկան ապացույցներ առ այն, որ աուդիտորներին տրված է գրավոր հանձնարարական՝ հարկ վճարողներին տեղեկություններ տրամադրելու իրենց իրավունքների վերաբերյալ:

ՊԵԿ-ի կայքում պարունակվում են տեղեկություններ աուդիտի գործընթացի, այդ թվում՝ բողոքարկման կարգի մասին, հղումներ Հարկային օրենսգրքին, կոնտակտային տվյալներ, այդ թվում՝ ուր ներկայացնել վեճը, եւ օրինակելի ձևանմուշ՝ բողոքարկում ներկայացնելու հնարավորություն տալու համար: Համացանցում որոնմամբ պարզվում է, որ հարկային վեճերի լուծման գործընթացի մասին առավել մանրամասն տեղեկություններ է տրամադրում նաև երրորդ կողմը: Աուդիտի ավարտին հարկ վճարողներին տրվող ծանուցումները հարկ վճարողներին հստակորեն տեղեկացնում են իրենց բողոքարկման իրավունքների մասին: Գնահատման թիմը չի կարողացել ապացույցներ գտնել առ այն, որ աուդիտորներին հստակորեն գրավոր հրահանգվել է տեղեկացնել հարկ վճարողներին իրենց՝ վեճերի հետ կապված իրավունքների եւ դրանց հետ կապված վեճերի լուծման ընթացակարգերի մասին:

P7-24. Վեճերը լուծելու համար պահանջվող ժամանակը

Այս ցուցանիշը գնահատում է, թե որքան արձագանքող է հարկային մարմինը վարչական վերանայումներ կատարելու հարցում: Գնահատված գնահատականները ներկայացված են 25-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 25. P7-24 Գնահատում

Չափման հարթությունները	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.	Գնահատական 2025թ.
P7-24. Վարչական վերանայումներն ավարտին հասցնելու համար պահանջվող ժամանակը:	M1	A	A

Հարկ վճարողների վեճերի ավելի քան 95 տոկոսն ավարտվում է 30-օրյա ժամկետում՝ Բողոքարկման հանձնաժողովի ընթացակարգերում օրենքով

սահմանված ժամկետին համապատասխան: Կատարման այս մակարդակը համահունչ է միջազգային լավ գործելակերպին:

ՀԱՐԿ ՎճԱՐՈՂՆԵՐԻ ԽԱՐԳՈՒՄՆԵՐԸ ԳՈՒՅԵ ԵՆ ՍՏԱՒԻՍ, ՈՐ ԲՈՂՈՋԱՐԿՄԱՆ ԽԱՆՃՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻԳ ԳՈՒՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՈՐՈՇԱԿԻ ՆՎԱԳՈՒՄ Է ՍՏԵՂԻ ՈՒՆԵԳԵԼ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ անցկացված 2023 թվականի հարկ վճարողների ընկալման խարցումը ցույց է տվել, որ հարկ վճարողների 46. 2 տոկոսը գոհ էր Բողոքարկման Խանճնաժողով բողոք ներկայացնելու գործընթացից, դատական ընթացակարգերից 51. 5 տոկոս գոհունակության հետ համեմատությամբ: 2024 թվականի հարկ վճարողների ընկալման խարցումը ցույց է տվել Բողոքարկման Խանճնաժողովի գործընթացից գոհունակության 6. 5 տոկոս անկում եւ դատական ընթացակարգերից գոհունակության աճ՝ մինչեւ 67. 9 տոկոս:

P7-25. ՎԵՃԵՐԻ ԵՂՔԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԸ

Այս ցուցանիշը դիտարկում է, թե որքանով են վեճերի ելքերը հաշվի առնվում քաղաքականությունը, օրենսդրությունը եւ վարչական ընթացակարգը որոշելիս: Գնահատված գնահատականը ներկայացված է 26-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 26. P7-25 Գնահատում

Չափման հարթությունը	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.	Գնահատական 2025թ.
P7-25. Որքանով է հարկային մարմինն արձագանքում վիճելի ելքերին	M1	C	C

Վեճերի վերլուծությանն ի պատասխան վարչական գործելակերպերի *ad hoc* ճշգրտման որոշ ապացույցներ Էին առկա: ՊԵԿ-ի անձնակազմը կարողացել է պատմել, թե ինչպես է օրենքի փոփոխությունը՝ կապված ձեռնարկություններից անկանխիկ վճարումներ առաջարկել պահանջելու հետ, հանգեցնում բազմաթիվ վեճերի, որտեղ ձեռնարկությունները կամ ձեռնարկատերերը տուգանվում էին, քանի որ հարկ վճարողի բանկն անկանխիկ վճարման ենթակառուցվածքներ չէր առաջարկում: Այս համատեքստում գնահատման թիմը չի կարողացել գտնել որեւէ պաշտոնական ցուցում վարչական կարգով դադարեցնելու աուդիտի ճշգրտումները: Այնուամենայնիվ, Բողոքարկման Խանճնաժողովի որոշումների վերանայումը ցույց է տվել, որ այն հարկ վճարողների բողոքները, որոնք բողոքարկում էին այս հարցը, ընդունվել էին այն ժամանակահատվածում, մինչեւ որ բոլոր բանկերը կարողանային անկանխիկ վճարման ենթակառուցվածքներ առաջարկել:

Ոչ մի ապացույց չկար, որ ՊԵԿ-ը պարբերաբար պատրաստում է դատարանի որոշումների վերաբերյալ որոշումների ազդեցության մասին տեղեկանքներ:

Գնահատման թիվը չի կարողացել գտնել ՊԵԿ-ի կողմից դատարանի որոշումների որևէ պաշտոնական վերլուծության ապացույցներ: Ընդհանուր առմամբ, ՊԵԿ-ն ունի կատարողականի բազային մակարդակ՝ կապված վեճերի ելքերի հիման վրա գործողություններ իրականացնելու հետ:

Ը. ԿԱՌ 8. Եկամուտների արդյունավետ կառավարում

Այս ԿԱՌ-ն կենտրոնանում է հարկային մարմինների կողմից եկամուտների կառավարման հետ կապված երեք հիմնական գործունեության վրա

- Հարկային եկամուտների կանխատեսման եւ հարկային եկամուտների գնահատման պետական բյուջետավորման գործընթացներում մուտքային տվյալների ապահովում: (Որպես ընդհանուր կանոն, հարկային եկամուտների կանխատեսումների եւ գնահատումների վերաբերյալ կառավարությանը խորհրդատվություն տրամադրելու հիմնական պատասխանատվությունը կրում է Ֆինանսների նախարարությունը: Հարկային մարմինը տվյալներ և վերլուծական տվյալներ է տրամադրում կանխատեսման և գնահատման գործընթացներում: Ֆինանսների նախարարությունը հաճախ հարկային մարմնի համար սահմանում է գործառնական եկամուտների հավաքագրման թիրախներ՝ տարբեր հարկերի համար եկամուտների կանխատեսումների հիման վրա:)
- Եկամուտների հաշիվների համակարգի վարում:
- Հարկերի վերադարձի վճարումը:

ԿԱՌ 8-ը գնահատելու համար օգտագործվում են կատարողականի երեք ցուցանիշներ.

- P8-26 — Պետական հարկային եկամուտների կանխատեսման գործընթացում ներդրում:
- P8-27 — Հարկային եկամուտների հաշվառման համակարգի պատշաճությունը:

P8-28 — Հարկերի վերադարձի մշակման պատշաճություն:

P8-26. Պետական հարկային եկամուտների կանխատեսման գործընթացում ներդրում

Այս ցուցանիշը գնահատում է հարկային մարմնի տրամադրած մուտքային տվյալների ծավալը պետական հարկային եկամուտների կանխատեսման եւ գնահատման մեջ: Գնահատված գնահատականը ներկայացված է 27-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 27. P8-26 գնահատում

Չափման հարթությունները	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.	Գնահատական 2025թ.
P8-26. Հարկային մարմնի տրամադրած մուտքային տվյալների ծավալը պետական հարկային եկամուտների կանխատեսման եւ գնահատման մեջ:	M1	C	C

ՊԵԿ-ը նպաստում է պետական եկամուտների կանխատեսմանը եւ վերահսկում է հավաքագրման մակարդակը, սակայն ակտիվորեն չի հետեւում հարկային ծախսերին եւ կորուստներին: ՊԵԿ-ը տվյալներ է հավաքում հարկային եկամուտների եւ տնտեսական պայմանների վերաբերյալ՝ ապահովելով մուտքային տվյալներ բյուջետավորման եւ եկամուտների կանխատեսման համար: Համաձայն Հայաստանի Հանրապետության «Բյուջեի մասին» եւ «Գանձապետական համակարգի մասին» օրենքի՝ եկամուտների կանխատեսումը պետք է պատրաստվի եւ թարմացվի տարին երկու անգամ կամ ըստ պահանջի: ՊԵԿ-ը վերահսկում է հարկերի փաստացի հավաքագրումը՝ պատրաստելով միտումների վերլուծություն եւ կանխատեսման վերլուծություն՝ բյուջեի կանխատեսումների համեմատությամբ, եւ վերլուծությունը տրամադրում է կառավարությանը յուրաքանչյուր եռամսյակ: Թեեւ ՊԵԿ-ն անհապաղ վճարում է ԱԱՀ-ի վերադարձի պահանջները, գնահատման գործընթացը ստեղծում է աշխատանքային ֆայլ, որը հրապարակային չէ և չի կարող փոխանցվել այլ կողմերի: Կարծես թե առկա է Ֆինանսների նախարարության կողմից որպես պետական բյուջեի գործընթացի մաս նախաձեռնվող տարեկան ծախսերի գնահատում օգտագործելով ՊԵԿ-ի և Ազգային վիճակագրական կոմիտեի տվյալները, սակայն որևէ ապացույց չկար, որ ՊԵԿ-ն ուներ հատուկ և փորձագիտական անձնակազմ, որը կստանձներ այս գործառույթը, կամ զբաղվում էր հարկային կորուստների և փոխանցված կրեդիտների շարունակական մոնիթորինգով և հաշվետվողականությամբ, հարկային ծախսերի ազդեցության հաշվետվությունների ներկայացմամբ կամ փոխանցված հարկային կորուստների պաշարների վերահսկմամբ:

P8-27. Հարկային եկամուտների հաշվառման համակարգի պատշաճությունը

Այս ցուցանիշն ուսումնասիրում է հարկային եկամուտների հաշվառման համակարգի պատշաճությունը: Գնահատված գնահատականները ներկայացված են 28-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 28. P8-27 գնահատում

Հափման հարթությունը	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.	Գնահատական 2025թ.
P8-27. Հարկային մարմնի եկամուտների հաշվառման համակարգի պատշաճությունը:	M1	C	B

Եկամուտների հաշվառման համակարգի հետ կապված համակարգերն ու

գործելակերպերը ողջամիտ են: ՊԵԿ-ն ունի ավտոմատացված հաշվապահական հաշվառման համակարգ, որն իրականացվում է սպասարկվում է մատակարարի կողմից, որն ինքն է պահպանում բարձրագույն մակարդակի որակի ազգային սերտիֆիկացում կապված իր պրոդուկտների համապատասխանության հետ: Համակարգն Էլեկտրոնային եղանակով միջերես է ապահովում ԿԲ գանձապետարանի եւ ՖՆ-ի համակարգերի հետ՝ հնարավորություն տալով մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրանցել վճարումները եւ պարտավորությունները: Ներքին աուդիտի վարչությունը չի իրականացնում եկամուտների հաշվառման համակարգի պարբերական ստուգումներ, սակայն կատարվում են ամբողջ համակարգի ամենամյա արտաքին աուդիտներ եւ համակարգի տարբեր բաղադրիչների եռամսյակային արտաքին աուդիտներ:

P8-28. Հարկերի վերադարձի մշակման պատշաճություն

Այս ցուցանիշի համար հարկային մարմնի՝ ԱԱՀ-ի վերադարձի պահանջների մշակման համակարգը գնահատվում է չափման երկու հարթություններով:

Գնահատված գնահատականները ներկայացված են 29-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 29. P8-28 գնահատում

Հափման հարթությունները	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.		Գնահատական 2025թ.	
P8-28-1. ԱԱՀ-ի վերադարձի համակարգի պատշաճությունը:	M2	B		A	
P8-28-2. ԱԱՀ-ի վերադարձը վճարելու (կամ հաշվանցելու) համար պահանջվող ժամանակը:		D	C	A	A

Ռիսկերի վրա հիմնված ավտոմատացված ստուգման գործընթացը

հնարավորություն է տալիս, որ ԱԱՀ-ի վերադարձերի 98 տոկոսը մշակվի 30 օրվա ընթացքում: ՊԵԿ-ը ներդրել է ռիսկերի վրա հիմնված ստուգման ավտոմատացված գործընթաց, որով գնահատվում է չափից ավելի կրեդիտային ԱԱՀ-ի վերադարձը՝ Նախապատվություն տալով գործընթացը ցածր ռիսկային (օրինապահ) հարկատուների համար արագացնելուն: III հավելվածի 15-րդ աղյուսակը ցույց է տալիս, որ ԱԱՀ-ի

վերադարձի ավելի քան 98 տոկոսը (ըստ դեպքերի թվի եւ արժեքի) մշակվում է 30 օրվա ընթացքում: ՊԵԿ-ը կարող է կիրառել ԱԱՀ-ի վերադարձի չափից ավելի ցանկացած գումար, որը պետք է հաշվանցվի այլ հարկային պարտավորությունների դիմաց: ՊԵԿ-ն իրավասու է ԱԱՀ-ի վերադարձի համար հավաքագրված ԱԱՀ-ն օգտագործելու լիազորություն: Հաստատված վերադարձի գումարները մուտքագրվում են հարկ վճարողի հաշվին, որը հասանելի է հարկ վճարողների պորտալի միջոցով: Եթե ԱԱՀ-ի վերադարձը ձգձգվում է, ապա հարկ վճարողի համար հաշվեգրվում է օրական տոկոսագումար:

Թ. ԿԱՌ 9. Հաշվետվողականություն և թափանցիկություն

Հաշվետվողականությունը եւ թափանցիկությունը լավ կառավարման

Կենտրոնական հենասյուներն են: Դրանց ինստիտուցիոնալացումն արտացոլում է այն սկզբունքը, որ հարկային մարմինները պետք է պատասխանատու լինեն հանրային ռեսուրսների օգտագործման եւ իշխանություն իրականացնելու ձեւի համար: Համայնքի վստահությունն ու հուսալիությունը բարձրացնելու համար հարկային մարմինները պետք է իրենց գործողությունների համար բաց կերպով հաշվետու լինեն նախարարի, կառավարության, օրենսդիր մարմնի եւ լայն հանրության առջեւ պատասխանատվության շրջանակներում:

ԿԱՌ 9-ը գնահատելու համար օգտագործվում են կատարողականի չորս ցուցանիշներ.

- P9-29 — Ներքին ապահովման մեխանիզմները:
- P9-30 — Հարկային վարչարարության արտաքին վերահսկողություն:
- P9-31 — Ամբողջականության հանրային ընկալումը:
- P9-32 — Միջոցառումների, արդյունքների եւ ծրագրերի հրապարակում:

P9-29. Ներքին ապահովման մեխանիզմները

Այս ցուցանիշի համար երկու չափման հարթությունները գնահատում են ներքին ապահովման մեխանիզմները, որոնք գործում են հարկային մարմին կորուստներից, սխալից եւ խարդախությունից պաշտպանելու համար: Գնահատված գնահատականները ներկայացված են 30-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 30. P9-29 Գնահատում

Չափման հարթությունները	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.		Գնահատական 2025թ.	
P9-29-1. Ներքին աուդիտի միջոցով տրված հավաստիացում:	M2	C	C	C	B
P9-29-2. Անձնակազմի բարելավության ապահովման մեխանիզմներ:		C		A	

ՊԵԿ-ն ունի կազմակերպչական առումով անկախ ներքին աուդիտի (ՆԱ) ստորաբաժանում, սակայն արտաքին ուսումնասիրության չի ենթարկվել: ՆԱ վարչությունը կազմակերպչական առումով հաշվետվություն է ներկայացնում ՊԵԿ նախագահի գլխավորած Աուդիտի հանձնաժողովին

Այն ունի տարեկան ծրագիր, որն ընդգրկում է ակնկալվող ստուգումները և ստուգման ոլորտները: Ներքին աուդիտորների համար իրականացվում է շարունակական մասնագիտացված և ընդհանուր վերապատրաստում: Չկար ապացույց ՆԱ ստորաբաժանման արտաքին ստուգման կամ այն մասին, որ առկա էր ՆԱ ընթացակարգերի կազմակերպված կենտրոնական շտեմարան: Ներքին անվտանգության վարչությունը դիտանցում է օգտագործողի մատչման աուդիտի հետքերը:

ՊԵԿ-ն ունի անձնակազմի բարելավության ապահովման գործուն մեխանիզմներ:

ՊԵԿ-ը ներդրել է Էթիկայի կանոնագիրը, որը համապատասխանում է քաղաքացիական ծառայողների վարքագծի ընդհանուր կանոններին եւ մշակվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից: Էթիկայի եւ վարքագծի վերաբերյալ պահանջների մասին հաղորդվում էլեկտրոնային փաստաթղթերի կառավարման համակարգի միջոցով, որն ունի հաղորդակցության ստացման գրառումներ եւ այդ հաղորդագրությունները ստացող եւ բացող անձնակազմի աուդիտի հետք: Առկա է հատուկ Ներքին անվտանգության վարչություն եւ հակակոռուպցիոն բաժին, որն անմիջականորեն հաշվետու է նախագահին եւ գործում է ազգային Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավարման ներքո: Բաժին ունի համապատասխան քննչական լիազորություններ եւ պարբերաբար շփվում է Հակակոռուպցիոն կոմիտեի հետ եւ փոխըմբռնման հուշագիր ունի Հայաստանի Հանրապետության տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի բաժնի հետ:

ՊԵԿ-ը վիճակագրություն է վարում Էթիկայի հետ կապված հարցերով քննության ենթարկված աշխատակիցների վերաբերյալ, և կարգապահական վարույթներին վերաբերող վիճակագրությունը հրապարակվում է որպես ՊԵԿ-ի տարեկան հաշվետվության մաս:

P9-30. Հարկային վարչարարության արտաքին վերահսկողություն

Այս ցուցանիշի չափման երկու հարթություններով գնահատվում են՝ 1) հարկային մարմնի գործառնությունների եւ ֆինանսական կատարողականի անկախ արտաքին վերահսկողության աստիճանը, եւ 2) կասկածելի ապօրինի արարքի եւ սխալ կառավարման դեպքերի քննության գործընթացը: Գնահատված գնահատականները ներկայացված են 31-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 31. P9-30 Գնահատում

Չափման հարթությունները	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.		Գնահատական 2025թ.	
P9-30-1. Հարկային մարմնի գործառնությունների եւ ֆինանսական գործունեության նկատմամբ անկախ արտաքին վերահսկողության ծավալը:	M2	D	D+	C	C
P9-30-2. Կասկածելի ապօրինի արարքի եւ սխալ կառավարման դեպքերի քննության գործընթացը:		C		C	

ՊԵԿ-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի կողմից ստուգվում են ամեն տարի, սակայն գործառնական կատարողականի աուդիտների ամենամյա ծրագիր առկա չէ: Հաշվեքննիչ պալատն իրականացնում է հարկային եկամուտների հաշվառման համակարգի աուդիտ, սակայն չկար ապացույց արտաքին կողմի կողմից իրականացվող գործառնական աուդիտի որևէ այլ տեսակի վերաբերյալ: ՊԵԿ-ն տրամադրում է Հաշվեքննիչ պալատի տարեկան հաղորդման նախագծի վերաբերյալ մեկնաբանություններ, որոնք այնուհետեւ ներառվում են վերջնական հրապարակված հաղորդման մեջ:

Մարդու իրավունքների պաշտպանը, մասամբ կատարելով օմբուդսմենի դերը, ad hoc հիմունքներով արձագանքում է հարկ վճարողների բողոքներին: Հարկ վճարողներից բողոքներ ստանալու դեպքում ՊԵԿ-ին առաջարկվում է հետադարձ տեղեկություններ ներկայացնել, որն այնուհետեւ ներառվում է զեկույցում, որը ներկայացվում է Ազգային ժողով: Բացառիկ դեպքերում Մարդու իրավունքների պաշտպանը կարող է քննություն իրականացնել կոնկրետ հարցերի վերաբերյալ (օրինակ՝ Հարկային օրենսգրքում առաջարկվող փոփոխությունների դեպքում, որոնք կարող են անհամաչափորեն ազդել իրավաբանական ծառայություններ մատուցողների վրա եւ հնարավոր է, որ սահմանափակել անվճար իրավաբանական օգնության հասանելիությունը): Այնուամենայնիվ, հարկ վճարողների բողոքների քննությունը Մարդու

իրավունքների պաշտպանի կողմից պարբերաբար իրականացվող երևույթ չէ, եւ Մարդու իրավունքների պաշտպանը պարբերաբար եւ կանոնավոր կերպով առաջարկություններ չի ներկայացնում ՊԵԿ-ին հարկ վճարողների բողոքների վերաբերյալ: Հատկանշական է, որ ՊԵԿ-ը տվյալներ չի վարում նաեւ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված՝ հարկ վճարողների բողոքների թվի վերաբերյալ:

Հայաստանն ունի ազգային հակակոռուպցիոն գերատեսչություն: Գերատեսչությունը պատասխանատու է ամբողջ Հայաստանում հակակոռուպցիոն ռազմավարության և ծրագրի մշակման համար: Այն վերահսկողություն է իրականացնում ՊԵԿ-ի հակակոռուպցիոն քաղաքականությունների նկատմամբ: ՊԵԿ-ն ակտիվորեն համագործակցում է Հակակոռուպցիոն գերատեսչության հետ հարկային ոլորտի պաշտոնատար անձանց ենթադրյալ կոռուպցիոն վարքագծի ամենածանր դեպքերի քննության հարցում:

P9-31. Բարեվարքության հանրային ընկալումը

Այս ցուցանիշն ուսումնասիրում է հարկային մարմնի նկատմամբ հանրային վստահությունը գնահատելու համար ձեռնարկված միջոցները: Գնահատված գնահատականը ներկայացված է 32-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 32. P9-31 Գնահատում

Չափման հարթությունը	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.	Գնահատական 2025թ.
P9-31. Հարկային մարմնի նկատմամբ հանրային վստահության դիտանցման մեխանիզմ:	M1	B	B

Համաշխարհային բանկի հետ համատեղ իրականացվում են հարկ վճարողների ընկալման հարցումներ, և արդյունքներն անհապաղ հրապարակվում են, սակայն արդյունքների օգտագործումը սահմանափակ է: 2023 և 2024 թվականների ընկալման տարեկան հարցումները հիմնված են եղել վիճակագրական վավեր նմուշների վրա, իսկ արդյունքները հրապարակվել են հարցումներն ավարտվելուց հետո վեց ամսվա ընթացքում: Հարցումներն ընդգրկել են բարեվարքության և հանրային վստահության որոշ ընկալումներ, սակայն ավելի մեծ կենտրոնացում են ունեցել ծառայության ընկալման վրա: ՊԵԿ-ը հաշվի է առնում բարեվարքության հարցերի վերաբերյալ հետադարձ տեղեկությունները, այդ թվում՝ հանրությանն ամենամյա վիճակագրություն տրամադրելով բողոքների վերաբերյալ: 2024 թվականի հարցումը ցույց է տվել հարկային մարմինների աշխատակիցների պրոֆեսիոնալիզմի և բարեվարքության 1.8% աճ՝ 2023 թվականի հարցման հետ համեմատությամբ: Այնուամենայնիվ, չկար ապացույց այն մասին, թե ինչպես են հարցումներն օգտագործվել հանրային կապերի արշավների

ընթացքում:

P9-32. Միջոցառումների, արդյունքների եւ ծրագրերի հրապարակում

Այս ցուցանիշի չափման երկու հարթություններով գնահատվում են հետևյալի ծավալները՝ (1) ֆինանսական եւ գործառնական կատարողականի հրապարակային հաշվետվություն, եւ (2) ապագա ուղղությունների եւ ծրագրերի հրապարակում:
 Գնահատված գնահատականները ներկայացված են 33-րդ աղյուսակում, որին հաջորդում է գնահատման հիմքում ընկած պատճառների բացատրությունը:

Աղյուսակ 33. P9-32 Գնահատում

Չափման հարթությունները	Գնահատման մեթոդը	Գնահատական 2016թ.		Գնահատական 2025թ.	
P9-32-1. Որքանով է հրապարակայնացվում հարկային մարմնի ֆինանսական եւ գործառնական կատարողականը, եւ հրապարակման՝ ժամանակին լինելը:	M2	A		A	
P9-32-2. Որքանով են հրապարակայնացվում հարկային մարմնի հետագա ուղղությունները, և հրապարակման՝ ժամանակին լինելը:		C+		B	
		D		C	

Ամենամյա հաշվետվություններում ընդգծվում է ֆինանսական և գործառնական ամբողջ կատարողականը, և այն հրապարակվում է: 2023 թվականի տարեկան հաշվետվությունը հրապարակվել է 2024 թվականի փետրվարին, իսկ 2024 թվականի հաշվետվությունը հրապարակվել է 2025 թվականի մարտին: 2024 թվականի տարեկան հաշվետվությունն ընդգրկում է եկամուտների հավաքագրումը, արդիականացման եւ օրենսդրական բարեփոխումների առաջընթացը, վերահսկողության եւ կատարման միջոցառումների մանրամասները, հարկ վճարողների սպասարկման մասով նախաձեռնությունները, ՏՏ համակարգերի ընդլայնումները, միջազգային այլ մարմինների հետ համագործակցությունը, մարդկային ռեսուրսների կառավարման մասով զարգացումները եւ վերահսկողության մեխանիզմները:

ՊԵԿ-ն իր ամբողջական գործառնական ծրագրերը չի հրապարակում : 2020 թվականի դեկտեմբերին հրապարակվել է 2021-ից 2025 թվականն ընդգրկող Ռազմավարական ծրագիր: Այնուամենայնիվ, ՊԵԿ-ն իր գործառնական ծրագրերը չի հրապարակում: Գնահատող թիմը կարողացել է պարզել, որ գործառնական ծրագրերի որոշ տարրեր

հրապարակվել էին՝ տարբեր փաստաթղթերում և տարբեր ժամանակների: Ավելին, այս տեղեկություններից որոշները հրապարակվել էին գործառնական ծրագրի ընդգրկած ժամանակահատվածը սկսվելուց առնվազն 6 ամիս հետո:

Հավելված I. ՀՎԱԳԳ շրջանակը

Կատարողականի արդյունքների ոլորտները

ՀՎԱԳԳ-ով գնահատվում է տվյալ երկրի հարկային վարչարարության համակարգի կատարողականը՝ ըստ 9 արդյունքային ոլորտների.

1. **Գրանցված հարկ վճարողների բազայի ամբողջականություն.** Հարկ վճարողների գրանցումը և հարկ վճարողների ամբողջական և ճշգրիտ տվյալների բազային վարումը հիմնարար են արդյունավետ հարկային վարչարարության համար:
2. **Ռիսկերի արդյունավետ կառավարում.** Կատարողականը բարելավվում է, երբ եկամուտներին սպառնացող ռիսկերը և հարկային մարմնի գործառնությունները վերհանվում և կանոնավոր կերպով կառավարվում են:
3. **Աջակցություն պահանջների կամավոր կատարմանը.** Սովորաբար հարկ վճարողների մեծամասնությունն իրեն պահանջների կամավոր կատարման հնարավորություն ստանալու համար անհրաժեշտ տեղեկություններ տրամադրվելու և աջակցություն ստանալու դեպքում կատարում է իր հարկային պարտավորությունները:
4. **Հայտարարագրերի ժամանակին ներկայացում.** Հարկային հայտարարագրերի ժամանակին ներկայացումը կարևոր է, քանի որ հարկային հայտարարագրի ներկայացումը հիմնական միջոց է, որով հարկ վճարողի հարկային պարտավորությունը հաստատվում է եւ դառնում է չվճարված և վճարման ենթակա:
5. **Հարկերի ժամանակին վճարում.** Հարկերի չվճարումը եւ ուշացումը կարող են վնասակար ազդեցություն ունենալ պետական բյուջեների եւ կանխիկի կառավարման վրա: Հարկային ապառքների հավաքագրումը ծախսատար եւ ժամանակատար է:
6. **Հայտարարագրերում ճշգրիտ հաշվետվությունների ներկայացում.** Հարկային համակարգերը մեծապես կախված են հարկային հայտարարագրերում ամբողջական եւ ճշգրիտ հաշվետվությունների ներկայացումից: Աուդիտի եւ ստուգման այլ միջոցառումները եւ հարկ վճարողների աջակցության պրոակտիվ նախաձեռնությունները խթանում են ճշգրիտ հաշվետվությունները եւ մեղմացնում են



հարկային խարդախությունը:

7. **Հարկային վեճերի արդյունավետ լուծում.** Անկախ, մատչելի եւ արդյունավետ վերանայման մեխանիզմները պաշտպանում են հարկ վճարողի՝ վիճարկելու հարկային գնահատումը եւ ժամանակին արդար լսում ստանալու համար իրավունքը:
8. **Եկամուտների արդյունավետ կառավարում.** Հարկային եկամուտների հավաքագրումը պետք է լիովին հաշվառվի, վերահսկվի բյուջեի ակնկալիքների առնչությամբ եւ վերլուծվի՝ կառավարության եկամուտների կանխատեսման վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու համար: Անհատներին եւ բիզնեսներին օրինական հարկերի վերադարձը պետք է արագ վճարվի:
9. **Հաշվետվողականություն և թափանցիկություն.** Որպես հանրային ինստիտուտներ, հարկային մարմինները պատասխանատու են հանրային ռեսուրսների օգտագործման եւ իշխանություն իրականացնելու ձեւի համար: Համայնքի վստահությունն ու վստահելիությունն ամրապնդվում են, երբ նախարարի, օրենսդիր մարմնի եւ ընդհանուր համայնքի առջեւ պատասխանատվության շրջանակներում առկա է վարչական գործողությունների համար բաց հաշվետվողականություն:

Ցուցանիշները և դրանց հետ կապված չափման հարթությունները

Հարկային մարմնի կատարողականի համար խիստ կարեւոր 32 բարձր մակարդակի ցուցանիշների հավաքածուն կապված է կատարողականի արդյունքների ոլորտների հետ: Հենց այս ցուցանիշներն են, որ գնահատվում եւ դրանց վերաբերյալ հաշվետվողություններ են ներկայացվում: Ցուցանիշի գնահատականին հասնելու համար հաշվի է առնվում չափման ընդհանուր 55 հարթություն: Ցուրաքանչյուր ցուցանիշ ունի մեկից հինգ չափման հարթություն:

Կրկնվող գնահատականները տեղեկություններ կապահովեն այն մասին, թե որքանով է բարելավվում տվյալ երկրի հարկային վարչարարությունը:

Գնահատման մեթոդաբանությունը

Ցուցանիշների գնահատումը հետեւում է նույն մոտեցմանը, որը կիրառվում է Հանրային ծախսերի եւ ֆինանսական հաշվետվողականության (ՀԾՖՀ) ախտորոշիչ գործիքում, որպեսզի օգնի համեմատելիությանը, երբ օգտագործվում են երկու գործիքները:

ՀՎԱԳԳ-ի գնահատման 55 հարթություններից յուրաքանչյուրը գնահատվում է առանձին: Ցուցանիշի ընդհանուր գնահատականը հիմնված է ցուցանիշի առանձին հարթությունների գնահատման վրա: Հարթությունների գնահատականների համակցումը ցուցանիշի ընդհանուր գնահատականի մեջ կատարվում է երկու մեթոդներից մեկի միջոցով՝ Մեթոդ 1 (Մ1) կամ Մեթոդ 2 (Մ2): Ինչպես Մ1-ի, այնպես էլ Մ2-ի համար

յուրաքանչյուր հարթության եւ ցուցանիշի գնահատման համար օգտագործվում է չորս կետանոց «ABCD» սանդղակ:

Մ1 մեթոդը կիրառվում է բոլոր մեկ հարթություն ունեցող ցուցանիշների եւ բազմակողմ հարթություններ ունեցող ցուցանիշների համար, որտեղ հավանական է, որ ցուցանիշի մի հարթության վատ կատարողականը վնասի խաթարի լավ կատարողականի ազդեցությունը միեւնույն ցուցանիշի մյուս հարթությունների վրա (այլ կերպ ասած՝ ցուցանիշի միացված հարթությունների ամենաթույլ օղակի վրա):

Մ2 մեթոդը հիմնված է ցուցանիշի առանձին հարթությունների միավորների միջինացման վրա: Այն օգտագործվում է ընտրված բազմակողմ հարթություններով ցուցանիշների համար, որտեղ ցուցանիշի մի հարթության ցածր գնահատականը պարտադիր չէ, որ խաթարի նույն ցուցանիշի մյուս հարթությունների վրա ավելի բարձր գնահատականների ազդեցությունը:

Հավելված II. Հայաստան. Երկրի պատկերը

Աշխարհագրություն	Հայաստանը դեպի ծով ելք չունեցող երկիր է, որը գտնվում է Հարավային Կովկասի տարածաշրջանում: Այն աշխարհագրական առումով տեղակայված է Արևմտյան Ասիայում՝ Հայկական լեռնաշխարհում: Հայաստանը հյուսիսից սահմանակից է Վրաստանին, հարավից՝ Իրանին, արևելքից՝ Ադրբեջանին, և արևմուտքից՝ Թուրքիային: Այն զբաղեցնում է 29,743 կմ ² տարածք: Մայրաքաղաքը և ամենամեծ քաղաքը Երևանն է:
Բնակչությունը	2.99 միլիոն (2023թ.), (Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, https://data.worldbank.org/country/armenia)
Չափահասների գրագիտության ցուցանիշը	15 տարին լրացած մարդկանց 100 տոկոսը կարող է կարդալ և գրել: (Աղբյուրը՝ https://data.worldbank.org/country/armenia)
Համախառն ներքին արդյունք	Նոմինալ ՀՆԱ՝ 26.258 միլիարդ ԱՄՆ դոլար: (2025թ.) (Աղբյուրը՝ Համաշխարհային տնտեսական տվյալների բազա, ԱՄՀ, 2025 թվականի ապրիլ)
Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն	8,857 ԱՄՆ դոլար (2025թ.) (Աղբյուրը՝ Համաշխարհային տնտեսական տվյալների բազա, ԱՄՀ, 2025 թվականի ապրիլ)
Արդյունաբերության հիմնական ճյուղերը	Հանքարդյունաբերություն (մոլիբդեն, ոսկի, պղինձ, ադամանդ), ոսկերչություն, գյուղատնտեսություն (ցորեն, գարի, թուզ, ծիրան, ձիթապտուղ, նուռ), սննդի արտադրություն, տեքստիլ, զբոսաշրջություն, ծխախոտի և խմիչքների (այդ թվում՝ ալկոհոլային խմիչքների) արտադրություն:
Հաղորդակցությունը	100 անձի հաշվով 80 համացանցից օգտվող: (2023թ.) 100 մարդկանց հաշվով 135 բջջային հեռախոսային բաժանորդագրություն. (2022թ.) (Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ)
Հիմնական հարկերը	ԱԱՀ (33.2 տոկոս), ԱԵՀ (28.5 տոկոս), ԿԵՀ (14.7 տոկոս), ալ հարկեր (12.6 տոկոս) (առանց մաքսային եկամտի)
Հարկերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին	2024 թվականին՝ 22. 4 տոկոս՝ առանց մաքսային հարկի հավաքագրումների:
Հարկ վճարողների թիվը	ԿԵՀ (107,914), ՀՎԱ (893,044), ԱԵՀ (6,381), ԱԱՀ (83,614), ներքին ակցիզային հարկեր (614) և շրջանառության հարկ (207,229)

Գանձող հիմնական գերատեսչությունը	Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե
Գանձող հիմնական գերատեսչությունում աշխատող անձնակազմի թիվը	1,205՝ կապված հարկային գործառույթների հետ, որպես ընդհանուր 2,556 անձից կազմված աշխատուժի (հարկային եւ մաքսային մարմինների) մաս:
Ֆինանսական տարին	Օրացուցային տարին:

Հավելված III. Տվյալների աղյուսակներ Ա. Հարկային եկամուտների հավաքագրումը

Աղյուսակ 1. Հարկային եկամուտների հավաքագրումները, (2022-2024թթ.) ¹			
	[2022թ.]	[2023թ.]	[2024թ.]
Տեղի արժույթով (միլիոն)			
Ազգային բյուջեով նախատեսված հարկային եկամուտների կանխատեսում²	1,843,917	2,203,710	2,613,640
Ընդհանուր հարկային եկամուտների հավաքագրումները	1,887,220	2,159,601	2,278,667
Կորպորատիվ եկամտային հարկ (ԿԵՀ)	222,805	321,521	335,715
Անձնական եկամտային հարկ (ԱԵՀ)	511,293	606,484	650,078
Գործատուների կողմից հարկերի վճարումն աշխատավարձից (ՀՎԱ) պահումը	422,933	492,165	554,046
Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ), զուտ ¹⁸	679,556	767,174	755,867
- Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) ¹⁸ համախառն ազգային գանձումներ	609,643	696,583	760,908
- Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) ¹⁸ ներմուծումներից գանձվող	282,910	358,970	285,141
- Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) ¹⁸ վճարված վերադարձեր	(212,997)	(288,379)	(290,182)
Ներքին գործարքներից գանձվող ակցիզային հարկը	84,488	94,011	93,031
Ակցիզային հարկը՝ ներմուծումներից գանձվող	43,011	55,435	53,517
Սոցիալական վճարների հավաքագրումները	64,457	90,292	103,395
Այլ ներքին հարկեր ³	281,609	224,685	287,065
Արտահայտված ընդհանուր հարկային եկամուտների հավաքագրումների տոկոսով			
Ընդհանուր հարկային եկամուտների հավաքագրումները	100.0	100.0	100.0
Կորպորատիվ եկամտային հարկ (ԿԵՀ)	11.8	14.9	14.7
Անձնական եկամտային հարկ (ԱԵՀ)	27.1	28.1	28.5
Գործատուների կողմից հարկերի վճարումն աշխատավարձից (ՀՎԱ) պահումը	22.4	22.8	24.3
Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ), զուտ	36.0	35.5	33.2
- Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) ¹⁸ համախառն ազգային հավաքագրումներ	32.3	32.3	33.4
- Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) ¹⁸ ներմուծումներից գանձվող	15.0	16.6	12.5
- Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) ¹⁸ վճարված վերադարձեր	(11.3)	(13.4)	(12.7)
Ներքին գործարքներից գանձվող ակցիզային հարկը	4.5	4.4	4.1
Ակցիզային հարկը՝ ներմուծումներից գանձվող	2.3	2.6	2.3
Սոցիալական վճարների հավաքագրումները	3.4	4.2	4.5
Այլ ներքին հարկեր	14.9	10.4	12.6
Արտահայտված ՀՆԱ-ի տոկոսով			
Ընդհանուր հարկային եկամուտների հավաքագրումները	22.2	22.8	22.4
Կորպորատիվ եկամտային հարկ (ԿԵՀ)	2.6	3.4	3.3
Անձնական եկամտային հարկ (ԱԵՀ)	6.0	6.4	6.4
Գործատուների կողմից հարկերի վճարումն աշխատավարձից (ՀՎԱ) պահումը	5.0	5.2	5.4
Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ), զուտ	8.0	8.1	7.4
- Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) ¹⁸ համախառն ազգային հավաքագրումներ	7.2	7.3	7.5
- Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) ¹⁸ ներմուծումներից գանձվող	3.3	3.8	2.8
- Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) ¹⁸ վճարված վերադարձեր	(2.5)	(3.0)	(2.8)
Ներքին գործարքներից գանձվող ակցիզային հարկը	1.0	1.0	0.9
Ակցիզային հարկը՝ ներմուծումներից գանձվող	0.5	0.6	0.5
Սոցիալական վճարների հավաքագրումները	0.8	1.0	1.0
Այլ ներքին հարկեր	3.3	2.4	2.8
Դրամային ՀՆԱ, տեղի արժույթով (միլիոն)	8,501,449	9,492,514	10,193,415
Բացատրական ծանոթագրություններ.			
¹ Սույն աղյուսակում հավաքված են երեք հարկաբյուջետային տարիների (օրինակ՝ 2022-2024թթ.) տվյալները հարկային մարմնի կողմից ազգային մակարդակով գանձված բոլոր ներքին հարկային եկամուտների առնչությամբ՝ գումարած մաքսային եւ (կամ) այլ գերատեսչության կողմից ներմուծման վրա գանձված ԱԱՀ-ն եւ ակցիզային հարկը:			
² Այս կանխատեսումը սովորաբար սահմանվում է Ֆինանսների նախարարության (կամ համարժեք մարմնի) կողմից՝ հարկային մարմնից ստացված տվյալներով, եւ սույն աղյուսակի նպատակներով պետք է ընդգրկի միայն աղյուսակում նշված հարկերը: Պետք է օգտագործվի վերջնական բյուջեի կանխատեսումը, որը ճշգրտվում է կիսամյա վերանայման գործընթացի միջոցով:			

¹⁸ Վելացված արժեքի հարկ = (ԱԱՀ-ի համախառն ներքին գանձում + ԱԱՀ-ի գանձում ներմուծման վրա) – ԱԱՀ-ի վճարված վերադարձ

³ Հարկային մարմնի կողմից ազգային մակարդակով գանձված այլ ներքին հարկերը ներառում են, օրինակ, գույքահարկը, ֆինանսական գործարքների հարկերը եւ քնապահպանական հարկերը:

Բ. Տեղաշարժերը հարկ վճարողների ռեգիստրում

Աղյուսակ 2. Տեղաշարժերը հարկ վճարողների ռեգիստրում, (2022 - 2024թթ.)

(Հղում՝ ԿԱՈՒ)

	Գրանցված հարկ վճարողներ ¹ [A]	Հարկ վճարողներ, որոնցից այլ կերպ չի պահանջվում փաստաթղթեր ներկայացնել ² [B]	Հարկ վճարողներ, որոնցից ակնկալվում է փաստաթղթեր ներկայացնել [C] = [(A) – (B)] ³	Հուշագրի կետեր ⁴ [D]	
				Նոր գրանցումներ [D1]	Տարվա ընթացքում գրանցումից հանված հարկ վճարողներ [D2]
[2022թ.]					
Կորպորատիվ եկամտային հարկ	74,935	419	74,516	14,507	1,245
Անձնական եկամտային հարկ	11,223	-	11,223	16	47
ՀՎԱ պահում (գործատուների թիվը)	808,995	2,113	806,882		
Ավելացված արժեքի հարկ	68,811	42,761	26,050	11,084	2,363
Ներքին ակցիզային հարկ ⁵	665		665	23	1
Այլ հարկ վճարողներ	177,369	2,323	175,046	14,529	2,799
[2023թ.]					
Կորպորատիվ եկամտային հարկ	88,197	378	87,819	8,989	2,588
Անձնական եկամտային հարկ	6,800	-	6,800	77	47
ՀՎԱ պահում (գործատուների թիվը)	856,339	2,123	854,216		
Ավելացված արժեքի հարկ	77,532	49,453	31,589	11,508	4,208
Ներքին ակցիզային հարկ ⁵	714		714	34	-
Այլ հարկ վճարողներ	189,099	2,307	205,038	14,406	6,516
[2024թ.]					
